3647
հայերէն

N 3152 3647-Աh

# ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

## Պատարագին Հայոց.

# LYTVRGIA ARMENA.




ROMÆ,

Typis Sacræ Congregationis de Propaganda Fide,

MDCLXXVII.

1677.

264 1608·ис



Սրբ տէր Յոհան Ոսկեբերան հեղինակ պատարագամատու-
ցին այսորիկ պատարագամատուցի ազգին հայոց ։

5289-56

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

# ՕՐԷՆՔ ԱՐԿԱՆԵԼՈՅ ՍՊԱՍ ԵԿԵՂԵՑՒՈՅ։

Յորժամ կամիցի քահանայն պատարագ մատուցանել. պարտ է այսպէս խորհրդաբար զգեստաւորիլ.

Մտցէ յաւանդատունն, հանդերձ սարկաւագօքն, ուր զգեստքն են պատրաստ։ Եւ զգեցեալ զպաշտօնէիցն ըստ իւրաքանչիւր աստիճանի, ասասցեն զայս սաղմոս։

Քահանայք քո զգեցցին զարդ։ Փոխ։ Յիշեա տէր զդաւիթ, և զամ։

Մինչ առ տուն ամենեքեան։

Եւ քարոզեսցէ սարկաւագն։

Խնդրեսցուք հաւատով միաբանութե ՚ի տէ, զի ողորմութեն զխնամս իւր, արասցէ ՚ի մեզ։ Ամենակալ տէր ած մեր կեցո՛ և ողորմեա։

Եւ ասասցեն երկոտասան։ տէր ողորմեա։

## ԵՒ ՔԱՀԱՆԱՅՆ ԱՍԱՍՑԷ ԶԱՂՕԹՍ։

ՈՐ զգեցեալ ես զլոյս որպէս զհանդերձ, տր մեր յս քս. անճառելի խոնարհութե ՚ի յերկրի երևեցար և ընդ մարդկան շրջեցար։ Որ եղեր քահանայ յաւիտեան յաւիտենից ըստ կարգին մելքիսեդեկի, և զարդարեցեր զեկեղեցիս քո սբ։ Այժմ տր ամենակալ որ պարգեւեցեր մեզ զնոյն երկնային հանդերձ զգենուլ. արժանի արա և զիս ՚ի ժամուս յայսմիկ զանպիտան ծառայս քո, որ համարձակիմ և մերձենամ ՚ի հոգևոր պաշտօն փառաց քոց։ Որպէս զի զամ բարշտութիւնս մերկացայց, որք են հանդերձք պղծութե, և զարդարեսցայց լուսով քով. Ընկեա՛ յինէն զչարիս իմ, և թոթափեա՛ զյանցանս իմ, որպէս զի արժանի եղէց հանդերձելոյ լուսոյդ առ ՚ի քէն։ Շնորհեա՛ ինձ քահանայական փառօք մտանել ՚ի պաշտօն սրբութեանց քոց, ընդ այնոսիկ, որք անմեղութե պահեցին զպատուիրանս քո։ Զի և ես պատրաստ գտայց երկնաւոր առագաստին, ընդ իմաստուն կուսանսն փառաւորել զքեզ քս, որ բարձեր զմեղս ամենեցուն. զի դու ես սրբութի՛ անձանց մերոց։ Եւ քեզ բարերարիդ այ վայել-

լէ փառք իշխանութիւն և պատիւ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . Ամէն .

Եւ մատուցեալ սարկաւագունքն, զգե-
ցուցանեն նմա զ՚անդերձն սաղմոսե-
լով: Եւ դնէ յաւագ զխոյրն ՚ի գլխ-
խոյն, և ասասցէ:

Դիր տր̃ սաղաւարտ փրկութեան ՚ի գլուխ իմ, պատերազմիլ ընդ զօրութիւնս թշնամւոյն: Շնորհօք տն̃ մերոյ յի̃ քի̃, որ ընդ քեզ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից . Ամէն .

Շապիկն:

Զգեցո ինձ տր̃ հանդերձ փրկութեան, և պատմուճան ուրախութեան, և շուրջ պատեա զգեստովս փրկութեան : Շնորհօք տն̃ մերոյ յի̃ քի̃ :

Վակասն:

Շուրջ պատեսցէ վակաս հաւատոյ զմիտս սրտի իմոյ, և շիջուսցէ ՚ի սմանէ զխորհուրդս աղտեղիս : Եւ զօրութիւն շնորհաց քոց ՚յամ ժամ բնակեսցէ ՚ի սմա : Շնորհօք տն̃ մերոյ յի̃ քի̃ .

Բազպանքն:

Տուր տր̃ զօրութիւն ձեռաց իմոյ, և լուա զամ աղտեղութիւնս իմ, որ զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ մաքրութեամբ հոգւոյ և մարմնոյ: Շնորհօք տն̃ մերոյ յի̃ քի̃ :

Ուրարն.

Զգեցո տր̃ պարանոցի իմոյ զարդարութիւն, և սրբեա զսիրտ իմ յամ աղտեղութենէ մեղաց : Շնորհօք տն̃ մերոյ յի̃ քի̃ :

Նափորտն, որ է շուրջառն:

Ողորմութեամբ քով զգեցո ինձ զգեստ պայծառ, և պատրաստեա ընդդէմ ներգործութեան չարին, զի արժանի եղէց փառաւորել զքո փառաւորեալ անունդ: Շնորհօք տն̃ մերոյ յի̃ քի̃ :

Ցնծասցէ անձն իմ ՚ի տր̃, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան, և պատմուճան ուրախութեան : Իբրև փեսայի եդ ինձ պսակ, և իբրև զհարսն զարդու զարդարեաց զիս : Շնորհօք տն̃ մերոյ յի̃ քի̃ :



Եւ յետ ընթերցուածոյ մարգարէութեան ընթերցուածոյն, ելանեն առաջի սրբոյ սեղանոյն : Եւ լուանան զձեռս :

Սաղմոս :

Լուացից : փառ : Ող — տա :

Քարոզ :

Մէ զխածածեան :

Աղօթք :

Ընկալ տէր զաղաչանս մեր բարեխօսութեամբ սբ աստուածածնին անարատ ծնողի միածնի որդւոյ քոյ . Եւ աղաչանօք ամ սրբոց քոց , լուր մեզ տէր եւ ողորմեա , ներեա , քաւեա , եւ թող զմեղս մեր :

Արժանաւորեա գոհանալով փառաւորել զքեզ ընդ որդւոյ եւ ընդ սբ հոգւոյդ . այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից : Ամէն .

Եւ ապա խնկարկեալ պատարագիչ քահանայն առաջի այլոց քահանայիցն առընթեր կացելոցն ասէ :

Խոստովանիմ առաջի այ , եւ սրբուհւոյ աստուածածնին , եւ առաջի ամ սրբոց , եւ առաջի ձեր հարք եւ եղբարք , զամ մեղս , զոր գործեալ եմ · քանզի մեղայ խորհրդով , բանիւ , եւ գործով , եւ ամ մեղօք , զոր գործեն մարդիկ , մեղայ , մեղայ . Աղաչեմ զձեզ խնդրեցէք զթ իմ յայ :

Պատասխանեն որք մերձն են :

Տր ողորմեսցի քեզ ամ հզօրն , եւ թողութիւն շնորհեսցէ ամ յանցանաց քոց , անցելոյս , եւ այժմուս , եւ յաւաջիկայիցն փրկեսցէ զքեզ , եւ հաստատեսցէ յամ գործս բարիս , եւ հանգուսցէ զքեզ ՚ի հանդերձեալ կեանսն : Ամէն :

Պա-

Պատասխանեսցէ և ձայնն ։

Եւ զատուսցէ և զմեզ մարդասէրն Տէր, և թողցէ զամ յանցանս մեր, Տացէ ժամանակ ապաշխարելոյ, և գործելոյ զբարիս: Ուղղեսցէ և զառաջիկայ կեանս մեր շնորհօք իւր Որդւոյն, հզօրն և ողորմածն, և նմա փառք յաւիտեանս:
Եւ ամէն:

Քոյ ԱԾ նախախնամողս լիցի խորհրդածութիւն, Եղիցի զմեզ կենդանի և ածցէ ՚ի մերձ լանջացն և զայստուսկան ևմիփարօքն, Եւ եկեսցեն առընթեր ընծայարան սեղանոյն, զլուացեալ զձեռս, Եւ մատուցեալ առաջի սեղանոյն, լռու և անմռունչ ասասցէ զաղօթս առ ՚ի Որդին անօրինաց գործոյն:

ԱՄԵՆԱԿԱԼ Տէր բարերար, մարդասէր Տէր բոլորից, յօրինող երևութից և աներևութից, փրկող և հաստատող, խնամող և խաղաղարար հօր հզօր Որդի: Հայցեմք բազկատարած մաղթանօք, գոչեմք հեծութեամբ յանդիման եղեալ քեզ ահաւորիդ, մատչիմք մեծաւ դողութեամբ, սասանիլ երկիւղիւ, մատուցանել նախ զբանական զայս պատարագ քում անզննին տէրութեանդ, իբր աթոռակցի, փառակցի, և արարչակցի Հայրենի անկապուտ պատուոյդ, և ընդոծին ծածկութեան խորոց խորհրդոց ամենակատար կամաց Հօրդ Էմմանուէլի, զքեզ առաջնի, փրկչի, և կենդանատուի, և արարչի Տէր: Ի ձեռն քո ծանուցաւ մեզ երկնային անձնաւորութիւն միասնական Տէրութեանդ՝ յորոց մի և դու ճանաչիս անհատ: Քև և ՚ի ձեռն քո առաջինքն նահապետական տոհմին շառաւիղք, տեսանողք անուանակոչեալք, զանցեալսն, և զգալոցսն անսուտ երաշխաւոր բարբառով բանին վերապատմեցին: Որդի Տէր քարոզեալ զքեզ մախեալն, որ ՚ի գնալն քո ՚ի վէմ ջրհորոյն, անպարագրելի զօրութիւն, ահեղ շքեղութբ տածողականաւ, թևապարփակ պաշտպանողօքն գթածուեալ ՚ի ծնունդս նորոգս, զաւազանին խորհրդածանուցեր: Յոր կերպարան օրինակութեան, նախ քան զկառուցանել զկոյծ մածեալ վերջնում մարգարէութ., յօրինեցեր կարօղ տիրապէս զբովանդակ բնութիւն ամենից բնաւից, բոլորից գոյից: Տէր Էից յանէից: Քև տնեղծանին ՚ի նորոգութիւն յարութեան Տէր եղեալ քս առ ՚ի քէն, ՚ի յայսմ ժամանակի, որ է օր վերջին այսմ կենցաղոյս, և որ առաջին երկրին կենդանեաց: Քեզ հնազանդեցաւ միութբ կամացն, թղ հօրն խորում ծանիցն Հօր անդրանիկն որդի մերոյս կերպիւ: Զքեզ աւետարանեաց ճշմարիտ Տէր հաւասար և համագոյ Հօր և Հոգւոյն: Զառ ՚ի քէն հայհոյութբ անբաւելի բարոզեաց, և իբր զծամարտից զքս հետևելոցն յասաքանակեան բերանն կարկեաց: Եւ զեւրն շնորհեաց արդարն և անարատն փրկչին Տէր: Որ վս մեղաց մերոց մատնեցաւ և յարեաւ վս զմեզ արդարացուցանելոյ: Նմա փառք ՚ի ձեռն քո, և քեզ բարեբանութիւն, ընդ Հօրդ ամենակալի յաւիտենից յաւիտեանս. Եւ ամէն:

Դարձեալ կրկնեսցէ ՚ի նոյն կարգ բանին, մինչև վերահասեցուցութեն լռութեան հրաշապէս օգնեալ յայտնեսցի առ ՚ի տարանել վերաբերն զքրիստոսին խաղաղութեն:

ԱՂԱՉԵՄՔ և աղերսեմք արտասուալից հառաչմամբ, ՚յամ անձնէ զփառաւորեալ արարչութիւն, անեղծ և անստեղծ անժամանակ Որդւոյդ զԹածի, որ բարեխօսդ ես վս մեր ՚յանմռունչ հեծութիւնս առ ողորմածն Հայր: Որ զքէս պահես, և զմեղուցեալս մաքրես,

և

և տաճարս կազմես կենդանիս և կեցու-ցիչ կամաց բարձրելոյդ հօր։ Արդ ազա-տեա զմեզ ՚յամ անմաքուր գործոց, որք ոչ են հաճոյք քումդ բնակութե։ Եւ մի շիջցի սու ՚ի մէնջ լուսոյդ շնորհաց փայլմունք ՚ի տեսանելեացս աչաց իմաս-տից։ Վ՟ն զի զքեզ ուսաք միանալ ՚ի մեզ ՚ի ձեռն աղօթից, և ընտիր վարուց խնկե-լոյ։ Եւ քանզի մինդ ՚յերրորդութենդ պա-տարագի, և միւսով ընդունիս հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկին քոյ։ Իսկ դու ընկալցիս զմեր պաղատանս, և յարդարեսցես զմեզ օթևանս պատուա-կանս, ամ պատրաստութե, ՚ի վայելչու ճաշակման երկնաւոր գառինդ, առանց պատժոց դատապարտութե ընդունելոցս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութե։ Եւ հալեսցի ՚ի հրոյս ՚յայսմա-նէ գայթակղութիւն մեր, ո՟ր մարգարէ-ին կենդանաբարոյն կայծակամբն ուռնէ-չեաց մաքրեցման։ Զի յայսմ ամի քոյդ քարոզեսցի գթութիւն, որպէս առաքելոցդ ա՟յ հօրդ քաղցրութե։ Որ զանառակ որդին մերձեցոյց ՚ի հայրենի ժառանգութիւն, և զպոռնիկն յառաջեցոյց ՚ի երկնային ար-քայութիւն արդարոյն երանութե։ Այո՛, և ես մի եմ ՚ի նոցանէ, և զիս ընկալ ընդ նոսին, իբր մարդասիրութե կարօ-տեալ մեծի, շնորհօք քո ապրեալ, արե-ամբ քո սրբեալ։ Զի յայսմ ամի ՚յամենայնուեմ ծանիցի մարդասիրութի քո, ընդ հօր փառաւորեալ համապատ-ւաբար, ՚ի մի կամս, և ՚ի մի իշխանութի զօրութե։ ՚Ի յաւիտեանս։ Զի քոյ է գթու-թի, և կարողութի մարդասիրութի, զօ-րութի, և փառք յաւիտեանս։ Ամէն։

Ապա յաւարտեցեալ եկեսցէ առ ընծայարան սեղանոյն. առ որ մատուցեալ նա-խապատրաստեալն զ՚ի շնորհս, զոր առեալ քահանայն դիցէ ՚ի մաղզմայն, ասելով։

Յիշատակ ա՟ծն մերոյ յի քի։

Եւ առեալ զգինին արկցէ խաչանիշ ՚ի-սկիհն։ Նոյնպէս և զբաժակն մի ջուր արկցէ ասելով։

Յաղագս յիշատակի փրկագործ տնօրէ-նութե ա՟ծ ո՟յ, և փրկչին մերոյ յի քի.

Եւ ասասցէ զաղօթս ՚ի ծածուկ յահա-նու ընծայարանի։

Ա՟Ծ ա՟ծ մեր, որ զերկնաւոր հացդ, զտ՟ր մեր յի քս, զկերա-կուր ամ աշխարհի առաքե-ցեր փրկիչ, և կեցուցիչ, և բարերար, օրհնել և սրբել զմեզ։ Ինքն դու տ՟ր, օրհնեա ✠ և այժմ զառա-ջադրութիւնս զայս։ Ընկալ զսա ՚յերկնա-յին քո սեղանդ։ Յիշեա տ՟ր բարերար և մարդասէր զմատուցօղս, և զո՟ որոց մատուցանի. Եւ զմեզ անդատապարտ պահեա ՚ի քահանայագործութե ա՟ծա-յին խորհրդոյ քոյ։ Զի ս՟բ և փառա-ւոր է ամենապատիւ մեծ վայելչութե փառացդ հօր և որդւոյ, և Հոգւոյդ սր-բոյ. այժմ և միշտ, և յաւիտեանս յաւի-տենից. Ամէն։

Եւ սաղմոսեսցէ ասելով։

Տ՟ր թագաւորեաց, և այլն։

Եւ արկցէ խունկ ասելով։

Խունկ մատուցանեմ առա-ջի քո ք՟ս բուրումն հոգե-ւորական։ Ընկալ ՚ի սէր ՚յերկ-նային, և ՚յիմանալի քո մատու-ցարանդ ՚ի հոտ անուշից։ Առաքեա առ մեզ փոխարէն զշնորհս և զպարգևս Հոգւոյդ սրբոյ։ Եւ քեզ մատուցանեմք զփառս ընդ հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ.

այժմ

այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ երեց երկրպագեալ քահանայն, համբուրեսցէ զսեղանն, Եւ սարկաւագն կացեալ 'ի միջի տաճարին, ձայնեսցէ ասելով:

Օրհնեա տէր:

Եւ քահանայն 'ի ձայն ասասցէ:

Օրհնեալ թագաւորութիւնն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ասասցեն այլ եկեղեցականքն ժամամուտ ըստ պատշաճի աւուրն:

Եւ 'յաւարտման երգոյն քարոզէ սարկաւագն:

Եւ ևս խաղաղութեան զՏէր:
Ժողովուրդն: Տէր ողորմեա:
Սարկաւագն: Կեցո և ողորմեա:
Ժողովուրդն: Կեցո տէր:
Սարկաւագն: Օրհնեա տէր:

Եւ քահանայն ասասցէ զաղօթս:

Տէր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքննին է, և փառքդ անհասանելի, որոյ ողորմութիւնդ անչափ է, և գթութիւնդ անբաւ. Դու ըստ առատ մարդասիրութեան քում, նայեա 'ի ժողովուրդս քո, և 'ի տաճարս 'յայս սուրբ. Եւ արա ընդ մեզ, և ընդ աղօթակիցս մեր առատապէս զողորմութիւն քո, և զգթութիւն: Զի քեզ վայելէ փառք իշխանութիւն, և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քահանայն ասասցէ խորհրդաբար:

Տէր Աստուած մեր կեցո զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւնս քո, զլրումն եկեղեցւոյ քոյ պահեա, սրբեա զսոսա, որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քոյ, Դու զնոսա փառաւորեա աստուածային զօրութեամբ քով. և մի թողուր զյուսացեալս 'ի քեզ: Զի քո է կարողութիւն և զօրութիւն, և փառք, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն: Ժողո…

Որ հասարակաց զայս, և միաձայն մեզ ամենեցուն շնորհեցեր աղօթել, և զերկուց և զերից միաձայնելոց 'յանուն քո զխնդրուածս պարգևել խոստացար: Դու և այժմ զծառայից քոց խնդրուածս, առ 'ի յօգուտն կատարեա, շնորհելով մեզ 'յայսմ յաւիտենիս զգիտութիւն քոյ ճշմարտութեան, և 'ի հանդերձելումն զկեանսն յաւիտենականս պարգևելով: Զի բարերար և մարդասէր ես Աստուած, և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ապա ասասցէ շարականն ըստ պատշաճի աւուրն: Եւ 'ի միջի ասման նոթիցն աւագի բեմին, և երկրպագեսցեն երիցս:

Եւ քահանայն ասասցէ զաղօթս:

Տէր Աստուած մեր, որ կարգեցեր 'յերկինս զդասս և զզինուորութիւնս հրեշտակաց և հրեշտակապետաց 'ի սպասաւորութիւն փառաց քոց: Արա այժմ ընդ մուտս մեր, մտանել, և սրբոց հրեշտակաց, և լինել պաշտօնակից մեզ, և փառաբանակից քում բարերարութեան: Ձայնիւ: Զի քո

է

է կարողութիւն և զօրութիւն ; և փառք յաւիտեանս : Ամէն.

Եւ համբուրեսցեն զսեղանն ; Եւ յաւարտման շարականին, գոչեսցէ Սարկաւագն :

Պռօսխումէ :

Եւ ասասցեն զերեքսրբեանն ձայնիւ :

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, ողորմեա մեզ :

Եւ քահանայն զոյգ ամէն ասասցէ ՚ի ծածուկ զաղօթս :

Սուրբ Աստուած ; որ ՚ի սուրբս հանգուցեալ ես, և երեքսրբեան ձայնիւ սերովբէք գովեն զքեզ, և քերովբէք փառաբանեն, և ամենայն երկնային զօրութիւնք քեզ երկրպագանեն : Որ ՚ի չգոյէ ՚ի գոյ ածեր զամենայն : Որ արարեր զմարդն ըստ պատկերի քում, և նմանութեան, և ամենայն շնորհիւ քով զարդարեցեր, և ուսուցեր խնդրել զիմաստութիւն և զգօնութիւն . և ոչ անտես արարեր զմեղուցեալսն, այլ եդեր ՚ի վերայ նոցա զապաշխարութեան փրկութիւն : Որ արժանի արարեր զմեզ զնուաստացեալ և զանարժան ծառայքս քո, ՚ի ժամուս յայսմիկ կալ առաջի փառաց սրբութեան սեղանոյ քոյ, և զօրհնաբանութիւն երկրպագութիւն և զփառաբանութիւն մատուցանել քեզ : Դու Տէր ընկալ ՚ի բերանոյ մեղաւորացս զերեքսրբեան օրհնութիւնս, և պահեա զմեզ քոյին քաղցրութեամբդ : Թող մեզ զամենայն յանցանս մեր զկամայ և զակամայ : Սրբեա զհոգիս զմիտս և զմարմինս մեր . և շնորհեա ՚ի սրբութեան պաշտել զքեզ զամենայն աւուրս կենաց մերոց . բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին, և ամենայն սրբոց քոց, որք յաւէտենից քեզ բարեհաճոյացան : Զի սուրբ ես Տէր Աստուած մեր, և քեզ վայել է փառք իշխանութիւն, և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Եւ սարկաւագն քարոզեսցէ :

Եւ ևս խաղաղութեամբ զՏէր :
Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի :

Սարկաւագն ձայնեսցէ :

Օրհնեա տէր :

Եւ քահանայն բազկատարած ասասցէ ՚ի ծածուկ զաղօթս :

Տէր Աստուած մեր բազկատարած զաղաչանս ծառայից քոց ընկալցիս և ողորմեսցիս, ըստ մեծի ողորմութեան քում : Զգթութիւն քո առաքեա ՚ի վերայ մեր և ամենայն ժողովրդեանս, որք ակնունին առ ՚ի քէն առատ ողորմութեանց : Ի ձայն : Զի ողորմած և մարդասէր ես, Աստուած գոլով . և քեզ վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից :
Ամէն : [illegible]

Եւ քահանայն նստցի ՚յաթոռման : Եւ ասասցեն Սաղմոս . Կց, ըստ խորհրդոյ աւուրն : Եւ ընթերցցին զգիրս մարգարէականս, և առաքելականս : Եւ զկնի ալէլուին ըստ ցուցանելոյ ընթերցուածոյն : Եւ ՚յաւարտմանն, Սարկաւագն բարձր ձայնիւ գոչեսցէ :

Օրթի .

Քահանայն դարձցի ՚ի խորանէն, և խաչակնքեսցէ ՚ի վերայ ժողովրդեանն, և ասասցէ

Յիշատակութիւն ✠ ընդ. ամենեսեան :
Ժղվ: Եւ ընդ հոգւոյդ քում :
Սրկն: Երկիւղածութեամբ լուարուք սր բոյ աւետարանիս ըստ Մատթէոսի :
Ժղվ: Փառք քեզ տր ած մեր :
Սրկն: Պրոսխումէ :
Ժղվ: Աէ Օթէօս :

Եւ սրկն ընթեռցցէ զաւետարանս: Եւ յաւարտն ասասցեն ամենեքեան :

Փառք քեզ տր ած մեր :

Եւ ասասցեն զհաւատամքն :

Հաւատամք 'ի մի ած հայր ամենակալ 'յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից: Եւ 'ի մի տր յս քս, 'յորդին այ, ծնեալ 'յայ հօրէ միածին, նախ քան զամ յաւիտեանս: Այ 'յայ, լոյս 'ի լուսոյ, ած ճշմարիտ, 'յայ ճշմարտէ, ծնունդ և ոչ արարած, նոյն ինքն 'ի բնութենէ հօր, որով ամ ինչ եղև 'յերկինս և 'յերկրի, երևելիք և աներևոյթք: Որ յաղագս մեր մարդկան, և վս մերոյ փրկութեան իջեալ 'յերկնից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն, Հգւոյն սրբով: Որով էառ մարմին հոգի և միտ, և զամ որինչ է 'ի մարդ ճշմարտապէս և ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, 'յերրորդ աւուր յարեալ, ելեալ 'յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդաջմէ հօր: Գալոց է նովին մարմնովն և փառօք հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս: Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան: Հաւատամք և 'ի սբ Հգին 'յանեղն և 'ի կատարեալն, որ 'ի հօրէ և 'յորդւոյ բղխի: Որ խօսեցաւ 'յօրէնս և 'ի մարգարէս, և 'յաւետարանս: Որ էջն 'յորդանան, քարոզեաց զառաքեալսն, և բնակեցաւ 'ի սուրբս: Հաւատամք և 'ի մի միայն 'յընդհանրական և 'յառաքելական եկեղեցի: Ի մի մկրտութիւն, 'յապաշխարութիւն, 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց: Ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց: Յ արքայութիւնն երկնից: Եւ 'ի կեանսն յաւիտենականս :

Իսկ որք ասեն էր երբեմն, յորժամ ոչ էր որդի; կամ էր երբեմն, յորժամ ոչ էր սբ Հգին: Կամ թէ 'յոչէից եղեն, կամ 'յայլմէ էութենէ ասեն լինել զորդին այ, և կամ զսբ Հգին: Եւ թէ փոփոխելի են, կամ այլայլելի, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի :

Լուսաւորչին :

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկրպագանելով սրբոյ Երրորդութեանն, և մի աստուածութեանն հօր և որդւոյ, և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից :
Ժողովն: Ամէն :

Եւ սարկաւագն քարոզեսցէ ձայնիւ :

Եւ ևս խաղաղութեան զտր աղաչեսցուք :
Ժողովն: Տր ողորմեա :
Սրկն: Եւ ևս հաւատով :

Մինչ նոքա երգեն, քահանայն զաղօթս ասէ 'ի ծածուկ :

Տէր մեր և փրկիչ յս քս, որ մեծ ես ողորմութբ, և առատ պարգևօք բարերարութեան քոյ: Որ դու քոյին կամաւ 'ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց, խաչի և մահու, յաղագս մեղաց մերոց. և պարգևեցեր առատապէս զպարգևս Հոգւոյդ սրբոյ երանեցեալ առաքելոցն: Հաղորդս արա և զմեզ տր, աղաչեմք

զքեզ

զքեզ ամենայն պաշտելեացդ, Թողութիւն մեղաց, և ընդունելութիւն Հոգւոյդ սրբոյ։

Քահանայն։ Որպէս զի արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Խաղաղութիւն ✠ ամենեցուն։ Ծղ

Խաղաղութիւն քո Քրիստոս փրկիչ մեր, որ 'ի վեր է քան զամ(ենայն) միտս և զբանս ամրացո զմեզ, և աներկիւղ պահեա 'յամ(ենայն) չարէ։ Համարեա զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո, որք հոգւով և ճշմարտութեամբ քեզ երկրպագանեն։ Զի ամենասուրբ Երրորդութեանդ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Օրհնեալ տէր մեր յիսուս քրիստոս։

Ժողովուրդն։ Ամէն։

Սարկաւագն։ Օրհնեա տէր։

Քահանայն։ Աստուած օրհնեսցէ ✠ զամենեսեան։

Սարկաւագն։ Սաղմոս ասացէք։

Սրբասացութիւն ըստ խորհրդեան աւուրն։

Յետ որոյ սարկաւագն ձայնեսցէ։

Մի ոք 'յերեխայից, միոք։

Ժողովուրդն եղանակեսցեն։

Մարմին տէրունական։

Եւ եղանակեսցեն։

Որք ըստ քարոզէ։

Եւ 'ի սարկաւագացն վերաբերցի սրբազան հացն, և օրհնութեան բաժակն 'ի մէջ սեղանն։



Եւ մինչ նոքա երգեսցեն, քահանայն խոնարհեսցի առաջի սրբոյ սեղանոյն, և խոնարհութեամբ աղօթեսցէ 'ի ծածուկ։

ՈՉ ՈՔ արժանի է 'յըմբռնելոցս մարմնաւոր ախտիւք և ցանկութեամբ մատչել 'ի խորհուրդ քո, կամ սպասաւորել արքունական փառաց քոց, քանզի պաշտել զքեզ մեծ և ահաւոր երկնաւոր զօրութեանց իսկ է։ Սակայն վասն անչափ բարերարութեան քո, անպարագրելի բանդ Հօր եղեր մարդ, և քահանայապետ մեր երևեցար։ Եւ իբրև տէր ամենեցուն զայսմ պաշտամանս և անարեան զենման զքահանայութիւն աւանդեցեր մեզ։ Զի դու ես տէր Աստուած մեր, որ տիրես երկնաւորաց և երկրաւորաց։ Որ 'ի վերայ քերովբէական աթոռոյ բազմիս, սերովբէից տէր, և թագաւոր Իսրայէլի։ Որ միայն սուրբ ես, և 'ի սուրբս հանգուցեալ։ Քեզ աղաչեմ զքեզ միայն բարերար, նայեա յիս 'ի մեղուցեալ և յանպիտան ծառայս քո, և սրբեա զհոգի և զմիտս իմ 'յամ(ենայն) պղծութենէ չարին։ Եւ բաւականացո զիս զօրութեամբ սուրբ Հոգւոյդ, որ զգեցեալ եմ զքահանայական շնորհս, կալ առաջի սրբոյ սեղանոյս, և քահանայագործել զքո անարատ մարմինդ, և զպատուական արիւնդ։ Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ մաղթեմ, մի դարձուցաներ զերեսս քո 'յինէն, և մի մերժեր զիս 'ի ծառայից քոց։ Այլ արժանի արա մատուցանել քեզ զընծայս զայս 'յինէն 'ի մեղուցելոյ և 'յանարժան ծառայէս քումմէ։ Զի դու ես որ մատուցանես, և մատչիս, և ընդունիս, և տաս, Քրիստոս Աստուած մեր։ Եւ քեզ փառս մատուցանեմք հանդերձ անսկզբն Հարբդ, և ամենասուրբ և բարերար Հոգւովդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Եւ զմեծագին վերաշինութեան ՚ի նեղութե
նէ ։ Եւ զամենայն ննջեցելոցն ՚ի մեր
ամենաշնորհ։ Եւ լուսոյն պահուս ասելով ։
Եւ ասացէք ։

Եւ զառաջնորդեալ առաքելական ։
Եւ Եւս խաղաղութեան զտր ։
Ժողովրդեան ։ Տէր ողորմեա ։
Առաքելական ։ Եւ Եւս հաւատով ։



Տր և Ած յն քն, որ խաչեցար վն մեր ողորմեա մեզ ։

Քահանայն, թէ տօնական կայցէ ՚ի խոր-հրդեանն, մինչ նա զքարոզն ասիցէ համբուրեսցէ զսեղանն, և խաչակն-քեալ ✠ զժողովուրդն, բարձրաստացեալ կայցէ առաջի սեղանոյն։ Եւ ասասցէ ՚ի ծածուկ զաղօթս ։

Տէր Տր ամենազօրութեանց, և արա-րիչ ամլ լինելութեանց, որ ՚յա-նէութէ զէակս ՚ի ցուցակու-թի ածեալ գոյացուցեր ։ Որ և զմեր հողեղէն բնութիւս, այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կա-ցուցեր սպասաւորս ։ Դու տր, որում պատարագեմք զպատարագս ; Ընկալ առ ՚ի մէնջ զառաջադրութիւս զայս, և աւարտեա զսա ՚ի խորհրդականութի մարմնոյ և արեան միածնի քո ։ Տուր թողութի մեղաց պարգևեա ճաշակողաց զհացս զայս, և զբաժակս ։

՚Ի ձայն ։ Շնորհօք և մարդասիրութբ տն մերոյ և փրկչին յի քի ։ ընդ որում քեզ հօր միանգամայն և Հոգւոյդ սրբոյ վայե-լէ փառք իշխանութի և պատիւ այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

Խաղաղութի ✠ ընդ ամենեսեան ։

Ժողովուրդն Ամէն ։ Եւ ընդ հոգւոյդ քում ։

Սարկաւագն ։ Ողջոյն տուք միմեանց ։

Խհ-ւն փօր ։

Եւ համբուրեսցեն զսեղանն, և զմիմ-եանս ։

Ձայնեսցէ սարկաւագն ։

Ահիւ կացցուք, երկիւղիւ ։

Դպիրքն ։ Առ քեզ տր ած ։

Սարկաւագն ։ Պատարագ քս ։

Դպիրքն ։ Ողորմութի և խա ։

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ ✠ ՚ի վե ժողովրդեանն և ասասցէ ։

Շնորհք, սէր, և աստուածային սրբարար զօ-րութիւն հօր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեան ։

Ժողովուրդն ։ Եւ ընդ հոգւոյդ ։

Սարկաւագն ։ ՚Ի վեր ընծայեցու ։

Դպիրքն ։ Ունիմք առ քեզ ։

Սարկաւագն ։ Եւ գոհացարուք ։

Դպիրքն ։ Արժան և իրաւ ։

Քահանայն ձեռնամած աղօթեսցէ ՚ի ծածուկ ։

Արժան է ստուգապէս և իրաւ ամենայնով միշտ երկրպագանելով փառաւո-րել զքեզ Հայր ամենակալ ։ Որ զքոյն անքննելի և արարչակից բանիւդ զանիծիցն բարձեր զխափան ։ Որ ժո-ղովուրդ ինքեան առեալ զեկեղեցի սեփա-կանեաց զհաւատացեալս ՚ի քեզ ։ Եւ զգալի բնութբ ըստ ՚ի կուսէն տնտեսու-թե հաճեցաւ բնակել ՚ի մեզ ։ Եւ նորոգ-գործ աստուածապէս ճարտարապետեալ զեր-կիրս երկինս արար ։ Վասն զի որում ոչ համարձակէին առաջի կալ զուարթնոց զօրք ,

Ջոկք, զարհուրեալք ՚ի խայլակնացայտ և ՚յանմատոյց լուսոյ Աստուածութեանդ, եղեալ այդպիսիդ մարդ յաղագս մերոյ փրկութեան: Շնորհեաց մեզ ընդ երկնայնոցն պարել զհոգեղէն պարս:

Ի ձայն: Եւ ընդ սերովբէսն, և ընդ քերովբէսն միաձայն սրբասացութե յօրինել նուագս, և համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին, և ասել: Սբ սբ սբ տր զօ:

Քահանայն բարձրաձայն աղօթեսցէ ՚ի ծածուկ, մինչ ՚նոքա երգեսցեն:

Սբ սբ սբ ես ճշմարտապէս և ամենասբ. և ո՞վ ոք պանծասցի բովանդակել բանիւ զքո ՚ի մեզ զանբաւ բարերարութեանդ զեղմունս: Որ և անդէնիսկ ՚ի նախնումն զանկեալն ընդ մեղօք զանազան եղանակօք խնամեալ մխիթարեցեր, մարգարէիւք, օրինացն աւանդութբ, քահանայութբ, և աւետրակերպ երինջոցն մատուցմամբ: Իսկ ՚ի կատարածի աւուրցս այսոցիկ զբովանդակ իսկ զպարտեաց մերոց խզեալ զդատակնիք, ետուր մեզ զորդին քո միածին, պարտապան և պարտս, զենումն և օծեալ, գառն և երկնաւոր հաց, քահանայապետ և պատարագ: Վասն զի նոյն բաշխի ՚ի միջի մերում միշտ անծախապէս: Վասն զի եղեալ հաւատարիւ և առանց շփոթելոյ մարդ, և անշփոթ միաւորութե մարմնացեալ ՚յԱստուածածնէ ՚ի սբ կուսէն Մարիամայ. Ճանապարհորդեաց ընդ ամ կիրս մարդկայինս կենցաղոյս առանց մեղաց: Եւ ՚յաշխարհակեցոյց և ՚յառիթն փրկութե մերոյ եկեալ կամաւ ՚ի խաչն:

Առեալ զհացն ՚ի սբ, ՚յԱստուածային, ՚յանարատ, և ՚ի պատուական ձեռս իւր.

Օրհ✠նեաց գոհացաւ, եբեկ, ետ իւրոց ընտրեալ, սբ և բազմեալ աշակերտացն, ասելով:

Առէք կերէք.

ԱՅՍ Է ՄԱՐՄԻՆ ԻՄ.

Որ վս ձեր և բազմաց բաշխի ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց:

Նոյնպէս և զբաժակն առեալ.

Օրհ✠նեաց գոհացաւ, եարբ, ետ իւրոց ընտրեալ սբ և բազմեալ աշակերտացն ասելով:

Արբէք ՚ի սմանէ ամենեքեան:

ԱՅՍ Է ԱՐԻՒՆ ԻՄ, ՆՈՐՈՅ ՈՒԽՏԻ, ՈՐ ՅԱՂԱԳՍ ՁԵՐ ԵՒ ԲԱԶՄԱՑ ՀԵՂԱՆԻ ՚Ի ՔԱՒՈՒԹԻՒՆ ԵՒ ՚Ի ԹՈՂՈՒԹԻՒՆ ՄԵՂԱՑ:

Եւ զսոյն միշտ ետուր յիշատակ առնել պատուիրան աւանդեաց մեզ բարերար որդին քո միածին: Եւ իջեալ ՚ի ստորին վայրս մահու մարմնովն, զոր ՚ի մերմէս ընկալաւ ՚յազգակցութե. Եւ զնիգս դժոխոցն աղարտեալ հզօրեղապէս, զքեզ միայն ծանոյց մեզ ճշմարիտ Աստուած, զԱստուած կենդանեաց, և մեռելոց:

Եւ առեալ զխնկայն ՚ի ձեռն ասասցէ ՚նոյն:

Եւ արդ մեք տր ըստ այսմ հրամանատուութե, յառաջբերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ և արեան միածնի քո: Յիշեմք զդորա, որ վս մեր զփրկաւոր չարչարանսն, Զկենդանատու խաչելութիւն, Զերեքօրեայ զթաղումն, Զերանելի յարութիւն, Զաստուածավայել համբարձումն, Զնստելն ընդ աջմէ քո հայր. Զահաւոր և զփառաւորեալ զմիւս անգամ գալուստն խոստովանիմք և օրհնեմք:

Եւ դնէ զընծայսն 'ի վերայ սեղանոյն, և ասասցէ 'ի ձայն:

Եւ զքոյս 'ի քոյոց քեզ մատուցանեմք, ըստ ամի, և յաղագս ամենեցուն:

Յամի օրհնեալ ես տր:

Մինչ նոքա երգիցեն, քահանայն բազկա_ տարած աղօթեսցէ 'ի ծածուկ:

Զքեզ արդարև տր ած մր գովեմք, և զքեզ գոհանամք հանապազ: Որ զանց արա_ րեր զմերով անարժանութեամբս, այսպիսի ահաւոր և անպատում խոր_ հրդոյ կարգեցեր սպասաւորս: Ոչ յաղագս մերոյ ինչ բարեգործութեան, յո_ րոց յոյժ թափուր եմք, և միշտ ունայն գտանիմք հանապազ: Այլ 'ի քո բազմա_ զեղ ներողութենդ ցանկ ապաւինեալ, համարձակիմք մերձենալ 'ի պաշտաւորութն մարմնոյ և արեան միածնի քոյ, տն մերոյ և փրկչին յի քի. Որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

Ամէն:

Խաղաղութիւն ✠ ամենեցուն: Ծնր

Սրկգն: Այ երկրպագեսցուք:
Ժղվրդն: Առաջի քո տր:

Քահանայն խոնարհեսցի, և ասասցէ:

Երկիրպագանեմք և աղաչեմք, և խնդրեմք 'ի քէն բարերար ած, առաքեա 'ի մեզ, և յա_ ռաջի եդեալ 'ընծայս 'յայս զմշտնջենաւորակից քո, և զէակից սբ Հոգիդ:

Եւ կանգնեալ խաչակնքեսցէ զընծայսն, ասելով 'ի յած:

Որով զհաց օրհ✠նեալ մարմին ճշմար_ տապէս արարեր տն մերոյ, և փրկչին յի քի:
Որով զհաց օրհ✠նեալ մարմին ճշմար_ տապէս արարեր տն մերոյ, և փրկչին յի քի:
Որով զհաց օրհ✠նեալ մարմին ճշմար_ տապէս արարեր տն մերոյ, և փրկչին յի քի:
Եւ զբաժակ օրհ✠նեալ արիւն ստու_ գապէս արարեր տն մերոյ և փրկչին յի քի:
Եւ զբաժակ օրհ✠նեալ արիւն ստու_ գապէս արարեր տն մերոյ և փրկչին յի քի:
Եւ զբաժակ օրհ✠նեալ արիւն ստու_ գապէս արարեր տն մերոյ, և փրկչին յի քի:
Որով զհաց և զգինին օրհ✠նեալ մար_ մին և արիւն ճշմարտապէս արարեր տն մերոյ և փրկչին յի քի. փոխարկելով հոգ_ ւովդ քով սրբով:

Երեքս անգամ կրկնեսցէ զաղօթս: Եւ սարկաւագն 'ի յած; Ամէն: Եւ քա_ հանայն տարածեալ զձեռս աղօթեսցէ 'ի ծածուկ:

Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մեր- ձեցելոց 'յանդատապարտութիւն, 'ի քա_ ւութիւն և 'ի թողութիւն մեղաց:

Սովաւ շնորհեա զսէր զհաս_ տատութիւն, և զցանկալի զխա_ ղաղութիւն ամ աշխարհի. Սր_ բոյ եկեղեցւոյ, և ամ ուղղա_ փառ եպիսկոպոսաց, քահանայից, սար- կաւագաց, թագաւորաց, աշխարհիս իշխա_ նաց, ժողովրդեանց, ճանապարհորդելոց, նաւելոց, կալելոց, վտանգելոց, աշխա_ տելոց,

տեսլեաց, և որք ՚ի պատերազմունս բար-բարոսաց:

Աղաւ և օդոց շնորհեա զբարեխառ-նութիւն, և անդոց զպտղաբերութիւն, և ախտացելոց ՚ի պէսպէս ցաւս փութա-պէս զառողջութիւն:

Աղաւ հանգո՛ զամենեսեան յառաջա-գոյն ՚ի քէն ննջեցեալսն, զեպիսկոպո-սունս, զերիցունս, զսարկաւագունս, և զբնաւ ուխտ եկեղեցւոյ քոյոյ սրբոյ, և զամն, որք ՚յաշխարհական կարգէ զարս և զկանայս, հաւատով վախճա-նեալս: Քհնյն: Ընդ սոյն և մեզ այց ա-րասցես. Բարերար Տէր, աղաչեմք:

Ժող: Յիշեա Տէր և ողորմեա:

Քահանայն: Մօր Տեառն սրբոյ կուսին Մարիամու, և Յովհաննու Մկրտչին, Ստե-փաննոսի նախավկային, և ամ սրբոց, եղիցի յիշատակ ՚ի սբ պատարագս աղա-չեմք:

Ժողովուրդն: Յիշեա Տէր և ող:

Սարկաւագն յաջակողմն սեղանոյն, ձեռ-նամած ասասցէ:

Առաքելոց սրբոց, մարգա:

Եւ մինչ սարկաւագն զբարոզն ասիցէ, քահանայն զաղօթս ասէ, զի միա-սին աւարտեսցեն:

Յիշեա Տէր և ողորմեա, և օրհնեա զսբ Կաթուղիկէ և առաքելա-կան եկեղեցի քո, զոր փրկեցեր պատուական արեամբ միածնի քոյ, և ազատեցեր խաչիւն սրբով. Շնոր-հեա նմա զանշարժ զխաղաղութիւն:

Յիշեա Տէր և ողորմեա և օրհնեա զամ ուղղափառ եպիսկոպոսունս, որք ուղիղ վարդապետութեամբ հատանեն ՚ի մեզ զբանն ճշմարտութեան:

Աստ յետ յիշելոյն զՓափն, յիշեսցէ և զ-առաջնորդն տեղւոյն ըստ պատ-շաճի և պատուոյ. Թէ Պատրիարք իցէ. Թէ Արքեպիսկոպոս իցէ. և Թէ Եպիսկոպոս իցէ: Բայց Կաթողի-կոսն, և կամ Եպիսկոպոսն Հայոց, եթէ իցէ հերետիկոս, կամ հերձուա-ծող, ոչ երբէք և ոչ ուրեք յիշեսցի: Իսկ եթէ իցէ ուղղափառ, յիշեսցի միայն ՚ի Թեմի և ՚ի վիճակի իւրում, և ոչ եր-բէք արտաքոյ նորին:

Քհնյն.

Եւս առաւել զսրբազան: Փափն մեր զՏէր այս անունն: Եւ զԵրջանիկ Պատ-րիարքն մեր. զՏէր այս անունն: Կամ զարքեպիսկոպոսն մեր. զՏէր այս ա-նունն: Կամ զեպիսկոպոսն մեր. զՏէր այս անունն: Շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ:

Եւ ապա ՚ի ձախակողմն սեղանոյն բոլո-րեսցէ սարկաւագն ձեռօք աղօթից: Զոր մի ոք մտացածին կարծեօք շրջեսցէ, զի մեծին խորհրդոյն է սաս-ցեալ զառաջնոց օրինացն:

Գոհութիւն և փառաբանութ:

Եւ ընդ սկսանել սարկաւագին զբա-րոզս, քահանայն զաղօթս ասէ, զի միասին աւարտեսցեն:

Յիշեա Տէր և ողորմեա և օրհ-նեա զքո առաջի կացեալ ժո-ղովուրդս, և զպատարագիս մատուցօղս, և պարգևեա սոցա զպիտոյսն և օգտակարսն:

Յիշեա Տէր և ողորմեա և օրհնեա զուխ-տաւորս և զպտղաբերիչս եկեղեցւոյ քոյ սրբոյ, և որք յիշեն զաղքատս ողոր-մածութեամբ: Եւ հատո նոցա զպարտս նոցա,

ըստ

ճաշս ընդ ուրախութեան տաւնատութեան քո, հասցես
մասնակից լինել, և ՚ի հանդերձելումդ ։

Յիշեա տէր և ողորմեա, և գթա ՚ի հոգիս հանգուցելոցն, հանգո զնոսին, և լուսաւորեա, և դասաւորեա ընդ սուրբս քո յարքայութեան երկնից, և արժանի արա ողորմութեան քում ։

Յիշեա տէր և զհոգի ծառայի քո․ Այս անունն ։ և ողորմեա նմա ըստ մեծի ողորմութեան քում, և հանգո այցելութե ՚ի լոյս երեսաց քոց ։ Եւ եթէ կենդանի է ։ փրկեա զնա ՚յամ յաղագայթից հոգւոյ և մարմնոյ ։

Յիշեա տէր և զայնոսիկ, որք յանձնեցին մեզ յիշատակել յաղօթս զկենդանիս և զհանգուցեալս, հաւատովք զխաղաղ ... մանց ՚նց և զմեզ, ընդ ուղղորդն, և որ լինէ փրկութե․ և վարձատրեա զեւ լորեցունց զամանց, և զերանելի բարութե ։ Եւ զտեալ զխորհուրդս մեր տաճարաց ՚յընդունականութե մարմնոյ և արեան միածնի քո ՟տն մերոյ և փրկչին ։ Ընդ որում քեզ հօր ամենակալի, Հոգւոյդ կենդանարար և ազատիչ ... փառք իշխանութի և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ ամէն ։

Քահանայն դարձցի, և խաչակնքեսցէ զժողովուրդն, ասելով բարձր ։ Խաղաղ

Եւ եղիցի ողորմութի մեծին ՟այ, և փրկչին մերոյ ՚յի քի ✠․ ընդ ձեզ, ընդ ամենեսեան ։

Ժողովուրդն ։ Եւ ընդ հոգւոյդ քում ։

Սարկաւագն ։ Եւ և խաղաղութե ։

Ժողովուրդն ։ Ամ ՟է ողորմեա ։

Երէցն ։ Ամ միածին սրբահ զօրս ։

Եւ անդ-ծն ինք բարեգութեն քահանայն բարձրատաբան խորհրդածական աղօթեսցէ ՚ի ծածուկ ։

Այ ճշմարտութե, և հայր ողորմութե գոհանամք զքէն․ որ ՚ի մեր քան զերանելին նահապետացն, զմեր տարապաւ րեցեալս առաւել մեծարեցեր զբնութի ։ Այ ՚ն զի ՟նց ՟ած կոչեցար, իսկ մեզ հայր հաճեցար անուանիլ գթալով ։ Եւ այժմ տէր աղաչեմք զքեզ, զայսպիսի առ ՚ի քէն զնորոգ, և զպատուական անուանադրութեն շնորհ, որ ըստ օրէ այս ծաղկեցուցեալ ծաղկեցո ՚ի մէջ եկեղեցւոյ քում սրբոյ ։

՚Ի ձայն ։

Եւ տուր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր, կարդալ զքեզ երկնաւորդ հայր, երգել և ասել ։

Եւ ժողովուրդն բարձրաբարբառ երգանեսցեն ։

Հայր մեր, որ ՚յերկինս ։

Եւ մինչ ՟նք երգեսցեն քահանայն աղօթեսցէ ՚ի ծածուկ ։

Տէր տէրանց ՟ած աստուածոց, Թագաւոր յաւիտենական, արարիչ ՟ամ արարածոց ; Հայր ՟տն մերոյ ՚յի ՟քի, մի տար զմեզ ՚ի փորձութի, այլ փրկեա ՚ի չարէ, և ազատեա ՚ի փորձութե ։ ՚Ի ձայն ։

Զի քո է արքայութի և զօրութի և փառք յաւիտեանս ։ Ամէն ։

Քահանայն ։ Խաղաղութի ընդ ✠ ամենեսեան ։ Ժողովուրդն ։ Եւ ընդ հոգւոյդ քում ։

Սարկաւագն ։ Այ ՟ն երկրպագեսցուք ։

Ժողովուրդն ։ Առաջի քո տէր ։

Քահանայն խոնարհեցնէ և ամենայն ժողո_ վուրդն ընդ նմա 'ի վայր, և քահա_ նայն աղօթեսցէ 'ի ծածուկ:

Ո՛Վ աղբիւր դու կենաց, և բղխումն ողորմութեան Աստուածդ, ողորմեա ժողովրդեանս, որք խոնարհեալ երկրպագա_ նեն աստուածութեանդ քո, Պահեա զսոսա ամ_ բողջս, տպաւորեա յոգւոջ սոցա զձև մարմնոյ ցուցակն առ'ի ժառանգութիւն և 'ի վիճակ հանդերձելոցդ բարեաց:

'Ի ձայն:

Քանզի յիւ սուրբ Աստուծոյ, ընդ որում քեզ Որդւոյդ սրբոյ և Հօր ամենակալի վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:
Ժողովուրդն: Ամէն:

Եւ քահանայն առեալ զսուրբ նշխարն 'ի ձեռն, Սարկաւագն ձայնեսցէ բարձր:

Պրոսխումէ:

Եւ քահանայն բարձրացուցէ առաջի ժողովրդեանն և ասասցէ: [illegible]

'Ի սրբութիւն սրբոց: [illegible]
Ժողովուրդն բարձր ձայնիւ:
Միայն սուրբ, միայն տէր, Յիսուս Քրիստոս, 'ի փառս Աստուծոյ Հօր: Ամէն:
Քահանայն: Օրհնեալ Հայր սուրբ ճշմարիտ:
Ժողովուրդն: Ամէն:
Քահանայն: Օրհնեալ Որդին սուրբ ճշմարիտ:
Ժողովուրդն: Ամէն:
Քահանայն: Օրհնեալ Հոգին սուրբ ճշմարիտ:
Ժողովուրդն: Ամէն:
Քահանայն: Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից:
Ժողովուրդն: Ամէն:
Ժողովուրդն: Հայր մեր, որ ի:

Եւ մինչ սա երգեսցեն զայս, քահանայն խոնարհեսցի, և աղօթեսցէ 'ի ծածուկ:

Նայեաց Տէր մեր Յիսուս Քրիստոս 'ի սրբութեան քումմէ, և յաթոռոյ փառաց թագաւորութեան քո: Եկ 'ի սրբել և 'ի կեցուցանել զմեզ, որ ընդ Հօր նստիս, և աստ պատարագիս.
Արժանի արա տալ մեզ 'յանարատ մարմնոյ քումմէ, և 'ի պատուական յարենէ. և 'ի ձեռն մեր ամենայն ժողովրդեանս:

Եւ զայս ասացեալ երկրպագեսցէ, և համբուրեսցէ զսեղանն, և առեալ զսուրբ մարմինն աջով թաթեսցէ 'յանապա_ կան արիւնն, և ասասցէ:

Տէր մեր, որ կոչեցեր զմեզ 'յանուն միածնի Որդւոյ քո քրիստոնեայս, և շնորհեցեր մեզ մկրտութիւն հոգևոր աւա_ զանաւն 'ի թողութիւն մեղաց, և արժանի արարեր զմեզ հաղորդիլ սուրբ մարմնոյ և արեան միածնի քո: Եւ այժմ աղա_ չեմք զքեզ Տէր, արա զմեզ արժանի ընդու_ նել զսուրբ խորհուրդս զայս մեզ 'ի մեղաց թողութիւն: Եւ գոհութեամբ փառաւո_ րել զքեզ ընդ Որդւոյ և սուրբ Հոգւոյդ: այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտե_ նից: Ամէն:

Եւ բարձրացուցէ առաջի ժողով_ րդեանն, և ասասցէ առ նս բարձր:

Որք ՚ի մէջ պատուական մարմնոյ և յարեան քո միոյ և փրկչին յի քի, ճաշակեցաք որ բաւ-թէ, որ իջեալ ՚ի յերկնից բաշխի ՚ի միջի մերում: Այս է կենաց ✠ յոյս, յարութի, քաւութի, և թողութի մեղաց: Սաղմոս ասասցէք տն այ մերոյ, սաղմոս ասասցէք երկնաւոր թագաւորին մերոյ անմահի, որ նստի ՚ի կառս քերովբէականս:

Սարկաւագն ձայնեսցէ բարձր:

Սաղմոս ասասցէք տն այ:

Դպիրքն եղանակեսցեն:

Քս պատարագեալ բաշխի:

Մինչ նք երգիցեն, քահանայն ասասցէ զաղօթսն ՚ի խորանն, և համբուրեսցէ զսրբատաւոր սեղանն զայս:

Զի որ օրհնութի, կամ զոր գոհութի ՚ի մէջ հացիս և բաժակիս մատուցաք, այլ քն զքեզ միայն օրհնեմք, հանդերձ հարբ և ամենասբ հոգւովդ. այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Դարձեալ ասասցէ:

Խոստովանիմ և հաւատամ, զի դու ես քս որդի այ, որ բարձեր զմեղս աշխարհի:

Եւ բեկեալ արկցէ ՚ի բաժակն արեանն, ասելով:

Լրումն հոգւոյն սրբոյ:

Եւ ապա առեալ զմի մասն ՚ի ձեռն իւր ասասցէ ՚ի ծածուկ աղօթաւոր և զգոհութի առ հայր:

Հայր մեր, որ անուանեցեր զմեզ անուանակցութեամբ միածնի քո, և լուսաւորեցեր մկրտութեամբ հոգևոր աւազանին; Այս ժամս արա ընդունել զմեզ խորհրդոյս զայս մեզ ՚ի մեղաց թողութի: Տպաւորեա ՚ի մեզ զշնորհս հոգւոյդ սրբոյ, որպէս ՚ի սբ առաքելոցն, որ ճաշակեցին, և եղեն մաքրիչք ամ աշխարհի: Եւ արդ տր հայր բարերար, զհաղորդութիս զայս մանաւորեա ճաշակման երեկոյին աշակերտացն, բառնալով զխաւար մեղաց իմոց: Մի հայիր յանարժանութիս իմ, և մի արգելուր զշնորհս հոգւոյդ սրբոյ. Այլ ըստ անբաւ մարդասիրութե քո, պարգևեա զսա քաւիչ մեղաց լուծիչ յանցանաց: Որպէս խոստացաւ և ասաց տր մեր յի քս, թէ որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, կեցցէ յաւիտեան: Արդ տուր զսա մեզ ՚ի քաւութի, զի որ կերիցեն և արբցեն ՚ի սմանէ, հասցեն զօրհնութի և զփառս հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Խաղաղութի ✠ ընդ ամենեսեան.

Գոհանամ զքեզ քս թագաւոր, որ արժանի արարեր զիս զանարժանս հաղորդել սբ մարմնոյ և արեան քո: Եւ այժմ տր աղաչեմ զքեզ, մի լիցի սա ինձ ՚ի դատապարտութի, այլ ՚ի քաւութի և ՚ի թողութի մեղաց, յառողջութի հոգւոյ և մարմնոյ, և ՚ի կատարումն ամ գործոց առաքինութե: Որպէս զի սրբեսցէ սա զխորհուրդս իմ, զհոգի և զմարմին իմ, և արասցէ զիս տաճար և բնակարան ամենասբ երրորդութեանդ: Զի ընդ սբս քո արժանի եղէց փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սբոյ հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:



1885 - 224
5289-58
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԽՍՀ - Арм ССР
Ա. Մ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## Յովհաննու Ոսկեբերանի:

Գոհանամ և մեծացուցանեմ, և փառաւորեմ զքեզ Տէր Աստուած իմ, զի զիս զանարժանս արժանաւորեցեր յաւուրս յայսմիկ հաղորդակից լինել Աստուածային և սոսկալի խորհրդոյ քո, անարատ մարմնոյդ և պատուական արեանդ: Վասն այսորիկ ըղձում 'ի բարեխօսութիւն ունելով, աղաչեմ յամենայն աւուրս և 'ի ժամանակս կենաց իմոց, ընդ սրբութեամբ քո պահեա զիս: Որպէս զի յիշելով զբարերարութիւնս քո, և կենդանի լինիլ ընդ քեզ, որ վասն մեր չարչարեցար և մեռար և յարեար:

Մի մերձեսցի Տէր իմ և Աստուած խորտակիչն, կնքելով անձին իմոյ պատուական արեամբդ քով: Այլ ամենակարօղ մաքրեա զիս ողջոյն յամենայն մեռելոտի գործոց իմոց, որ միայն ես անմեղ: Այլ միացո զխղճմտանս իմ Տէր յամենայն փորձութեանց, և զպատրանս մտաց իմ դարձո յետս պատրաստեալ և ամաչեցեալ, որչափ յառաջ իցէ իմ: Այլ մբացո զգնացս միտաց և լեզուի իմոյ, և զամենայն ճանապարհս մարմնոյ իմոյ: Լեր հանապազորդ ընդ իս, ըստ անսուտ խոստմանց քոց, Թէ որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցէ և ես 'ի նմա: Որ դու ասացեր մարդասէր; կացո զբանս Աստուածային անլուծանելի հրամանաց քոց: Քանզի դու ես Աստուած ողորմութեան և գթութեան և մարդասիրութեան, և պարգևիչ ամենայն բարեաց, և քեզ վայելէ փառք հանդերձ Հարբ և ամենասուրբ Հոգւովդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն: ՄԻՐՈՀ

Ճաշակի է այս մասըն.....

Եւ ապա մատուցեսցէ զնշխարն, և խնկեսցէ 'ի Տնօրինականն Տեառն զպէտս հայցուածոց անձին իւրոյ և ժողովրդեանն և աշխարհի. և Թողութիւն խնդրեսցէ հոգւոց ննջեցելոց Թշնամեաց և ատելեաց: Եւ մնացեալն առնու և զօրութիւն ճաշակեսցէ 'ի մարմնոյն, և ապա 'ի բաժակէն, ասելով:

Մարմին քո անապական լիցի ✠ ինձ 'ի կեանս, և սուրբ արիւն քո 'ի քաւութիւն և 'ի Թողութիւն մեղաց:

Եւ Թէ աշակերտ կայցէ, հաղորդեսցի և նա, Եւ ապա աշակերտն զսկիհն, և դարձցի առ ժողովուրդն ասելով բարձր:

Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք:

Ժողովուրդն ասասցէ բարձր ձայնիւ:

Աստուած մեր և Տէր մեր երևեցաւ,

Եւ հաղորդեսցէ զնոր ձեռնադրեալսն, բայց ոչ 'ի բերանն, այլ 'ի կայսին տալով զսրբութիւն: Եւ յետ ամենեցուն ժողովրդեանն հաղորդեցուցանելոյ, կամ հաղորդելոյն խաչակնքեսցէ զժողովուրդն, և ասասցէ բարձր:

Կեցո Տէր ✠ զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւնս քո, հովուեա և բարձրացո զսոսա յայսմհետէ մինչև յաւիտեան:

Եւ յետ հաղորդութեանն երգեսցեն:

Լցաք 'ի բարութենէ քո:

Քահանայն:

Գոհանամք զքէն Հայր ամենակալ, որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ զսուրբ եկեղեցի, տաճար սրբութեան, ուր փառաբանի սուրբ Երրորդութիւն. Ալէլուիա:

Գոհանամք զքէն Քրիստոս Թագաւոր, որ պարգևեցեր մեզ կենդանութիւն կենարար մարմնովդ և արեամբդ քով սրբով. Ալէլուիա:

Գո_

Գոհանամք զքէն Տէր Աստուած մեր, որ նաւորդեցեր զմեզ կեցուցեր, անարատ պահեա հաւատով երրորդութեանդ՝ յայսմ հետէ մինչև յաւիտեան: Ալէլուիա:

Մաղթանք: Եւ եւս խաղաղ: Եւ եւս հաւա:

Ծնրադրութիւն: Գոհանամք զքէն:

Եւ քահանայն ասասցէ՝ ՚ի ծածուկ:

Գոհանամք զքէն Տէր Աստուած, որ զայսպիսի ճաշակումն բարութեան շնորհեցեր մեզ ՚ի սրբութեան կենդանութեան: Սովիմբ պահեա զմեզ սուրբ և անարատ բնակեալ զմեօք քո Աստուածային խնամօքդ: Հովեա զմեզ ՚յանդաստանս կամաց քոց սրբոց, և բարերարաց: Որով ամրացեալք ՚յամ բանսարկուին ընդդիմութեանց, քում և ՆԹ արժանի եղիցուք լսել ձայնի, Եւ քեզ միայնոյ քաղցրայոյժ և ճշմարիտ հովուին հետևիլ, և առ ՚ի քէն ընդունել զպատրաստեալ տեղի արքայութեանդ երկնից: Ա Ծ մեր, և տր և փրկիչ յս քս, որ ես օրհնեալ ընդ հօր, և ընդ սուրբ Հոգւոյդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Խաղաղութիւն ✠ ընդ ամենեսեան:

Անքննին, անհաս, երրեակ [illegible]ութեանդ, հաստիչ, ընդունող և անբաժանելի միաւորականն ՚ի մէ երրորդութեանդ, վայելէ փառք իշխանութիւն, և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից: Ամէն.

Եւ երկրպագեալ համբուրեսցէ զսեղանն: Եւ իջեալ ՚ի բեմէ եկեղեցւոյն, ասասցէ զաղօթս: ՚Ի ձայն:

Որ օրհնես զայնոսիկ, որք օրհնեն զքեզ Տէր, և սրբես զյուսացեալսն ՚ի քեզ: Կեցո զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւնս քո. Զլրումն եկեղեցւոյ քո պահեա: Սրբեա զնոսա, որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քոյ: Դու զմեզ փառաւորեա աստուածային զօրութեամբ քով: Եւ մի թողուր զյուսացեալսն ՚ի քեզ: Զխաղաղութիւն քո պարգևեա ամ աշխարհի, եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քրիստոնէից, և զինուորեալ մանկանց նց, և ամ ժողովրդեանս: Զի ամ տուրք բարիք, և ամ պարգևք կատարեալք ՚ի վերուստ են իջեալ առ ՚ի քէն, որ ես հայր լուսոյ: Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Եւ ժողովրդեանն ասասցեն երեք անգամ:

Եղիցի անուն:

Եւ քահանայն դարձցի ՚ի ժողովրդեանն, ասելով.

Կատարումն օրինաց և մարգարէից դու ես քս փրկիչ մեր, Որ լցեր զամ հայրական տնօրէնութիւնս քո. լցո՛ և զմեզ Հոգւովդ քով սրբով:

Ժողովուրդն: Ամէն:

Եւ ասասցեն զսաղմոսն.

Օրհնեցից զՏէր:

Եւ ընդ սաղմոսելն բաշխեսցէ ՚նշխար ժողովրդեան. ՚յաւարտմանն:

Փառք հօր եւայլ:

Եւ

Եւ բարձրանայ խաչակնքելով դէպ ժողովուրդն, և ասասցէ բարձր:

Օրհնեալ ✠ եղերուք ՚ի շնորհաց Սբ Հոգւոյն, երթայք խաղաղութբ, և տր եղիցի ընդ ամենեսեան: Ժղ. Ամէն:

Եւ դառնայ ՚յարեւելս, երկրպագէ առաջի սեղանոյն, և ասասցէ:

Քհ. Ք Ած յմ քն ողորմեաց ինձ:

Եւ մտեալ ՚ի սարկաւագատունն մերկացի ՚ի զգեստուցն: Եւ կալ առաջի սեղանոյն, երկրպագեսցէ երիցս, և երթայցէ խաղաղութբ:

Սկիզբն սրբոյ Աւետարանիս ըստ Յոհաննու:

Եւ կարդայցէ զսկիզբն սորայ աւետարանին ըստ Յոհաննու, մինչև ՚յայն տեղին, ուր ասէ:

Լի շնորհիւ և ճշմարտութբ:

## Վ Ե Ր Ջ:

# ՍՊԱՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ

պ ա տ ա ր ա գ ի.

# MINISTERIVM MISSAE.




R O M Æ,

Typis Sacræ Congregationis de Propaganda Fide;

M DC LXXVII.

# ԽՐԱՄԱՏՔ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԳՈՒԹԵԱՆ ԵՒ ՈՂՈՐՄՈՒ-ԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ:

Զգեցեալ քահանայն եկեալ առ բեմն դառնայ, եւ մտանէ ՚ի ներքս աւանդատանն, եւ ասէ սաղմոս:

Քահանայքն զգեցցին: Յիշեա՛ Տէր զգթութիւն եւ զող[illegible]ն ՚ի յաւիտենից: Եւ ասեն, փառք, այժմ եւ միշտ:

Քահանայ: Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ ՚ի Տեառնէ, որ զողորմութեան զշնորհս իւր առաքեսցէ ՚ի վերայ մեր, Տէ՛ր ամենակալ կեցուսցէ եւ ողորմեսցի: Տէր ողորմեա մեզ որ Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում, ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

Եւ ասէ քահանայն երկրորդսն:

Տէր ողորմեա; Եւ ապա զաղօթսն:

Եւ սարկաւագն ասէ զդարձեալ, եւ ասէ:

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Քահանայն: Օրհնութիւն ✠ եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Հանդերձիւ եւ շապիկն ասէ, եւ ուրարն, եւ գօտւոյն, եւ բազպանն, եւ շուրջառն:



՚Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, ամէն:

Ի գիշերն երգեն :

ԽՈՐՀՈՒՐԴ խորին անհաս անսկիզբն, որ զար_դարեցեր զվերին պետութիւն, 'ի յառագաստն անմատոյց լու_սոյն, գերապանծ փառօք զդաս հրե_ղինաց:

Անճառահրաշ զօրութբ ստեղծեր զա_դամ պատկեր տիրական, և նազելի փառօք զգեստաւորեցեր 'ի դրախտին ե_դենի տեղի բերկրանաց:

Չարչարանօք քո Տր միածնիդ նորո_գեցան արարածք ամ, և վերստին մարդն անմահացաւ, զարդարեալ 'ի զգեստ ան_կողոպտելի:

Անձրեւածին բաժակ հրահոսան, որ հեղեր յառաքելոյսն 'ի սբ վերնատունն; հեղ և 'ի մեզ Հոգին Տր ած, ընդ պատ_մուճանի քոյ զիմաստութիւն:

Տան քում վայելէ սրբութիւն, որ զգե_ցար զվայելչութիւն, սրբութեան փառաց ընդ մէջ քո ածեալ, պատուեա զմէջս մեր ճշմարտութբ:

Որ զարարչագործ բազուկս քո տարա_ծեցեր ընդ դէմ աստեղաց, հաստատեա զբազուկս մեր կարողութբ, համբառ_նալ ձեռաց առաջի միջնորդել:

Խոյր մաքուր թագ 'ի գլուխ, պատուեցես զմիտս և զգայարանս, խաչանիշ զօրա_ցամբ ըստ ահարոնի, ծաղկեալ ոսկեթել 'ի գլուխ խորանիս:

Ռամից բազմից տիրապէս Տր պետա_կան, նախագիտապատ սերովբ զգեստաւո_րեցեր քում Տր խորհրդոյդ լինել սպա_սաւոր:

Թագաւոր երկնաւոր զեկեղեցի քո ✠ անշարժ պահեա, և զերկրպագուս ան_ուան քում պահեա 'ի խաղաղութեն:

Քահանայն: Հաւատով: Սարկաւագն:
Դասս: Մտցուք առ տուն զիսկնն 'ի մամն:
Փառք հօր: Այժմ և միշտ:
Քահանայն: Եւ զմն սրբուհւոյ ածած_նին Տր ընկալ զաղաչանս մեր և կեցո:

Սարկաւագն: Սուրբ զածածինն և զամ սբս բարեխօս արասցուք առ հայր 'ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի, և գթացեալ կեցուսցէ զարարածս իւր:

Ամենակալ Տր ած մեր կեցո և ողոր_մեա:

Քահանայն: Ընկալ Տր զաղաչս:
Եւ ասէ: Խոստովանիմ առաջի ած:
Եւ մերձակայ քահանայն ասէ:
Ողորմեսցի: Քահանայն: Ազատեսցէ զձեզ մարդա:
Դպիրքն: Յիշեսջիր զմեզ առաջի անմահ գառին ած:
Քահանայն: Յիշեալ լիջիք առաջի ան_մահ գառին ած:
Դպիրքն ասեն Սղմս, 99.
Հրճուեսցէք. Որ ասի: Աղաղակեսցէք առ:

Քարոզ: Սբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏր, զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեն իւրոյ,

Ամենակալ Տր ած մեր կեցո և ողոր_մեա:

Քահանայն: 'Ի մէջ տաճարիս, և առա

ջի Ած ընկալ որ նշանացս և որ տեղւոյս, խոնարհեալ երկնիւքն երկնաւորագոյնեմք, զոր զհրաշալին և զյաղթօղ զզօրութիւնդ քո փառաւորեմք։ Եւ քեզ մատուցանեմք զգոհութիւն և զփառս ընդ Հօր և ընդ Սբ Հոգւոյդ, այժմ և միշտ, և յաւիտեանս, յաւիտենից. Ամէն։

Մտից առ։ Եղանակաւորն։ Դ֊ար։

Առաւօտն առ տաւն զխաչին 'ի ժամն։

Աղօթք։ Օրհնեցուք զհայր Տն մերոյ Յի Քի, որ արժանի արար զմեզ կալ 'ի տեղւոջս փառաբանութե, և երգել զերգս հոգևորս։ Ամենակալ Տր Ած մեր կեցո և ողորմեա։

Քահանայն։ 'Ի յարկի սրբութե և 'ի տեղւոջ փառաբանութե, հրեշտակաց բնակարանիս, և մարդկան քաւարանիս։ Առաջի Ած ընկալ և պայծառացեալ որ նշանաց, և որ սեղանոյս, խոնարհեալ երկնիւքն երկնաւորագոյնեմք, զոր զհրաշալին և յաղթօղ զզօրութիւնդ քո փառաւորեմք։ Եւ քեզ մատուցանեմք զգոհութիւն և զփառս ընդ Հօր և ընդ Սբ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Եւ ամբարձեն զխաչաջուրն։ Եւ դպիրքն եղանակեն մեղեդի խորհրդաւոր։ Եկայք տող։

## Աւետեաց։

Բարբառ աւետեաց ձայնիւ։ Կրկնէ։ Գաբրիէլ գոչէր ուրախութեան։ Աւետիս առաքիմ մարդոյ։ Կրկնէ։ պատրաստել տեղի տէրունեանն։

## Ծննդեան։

Նոր ծաղիկ այսօր բղխի յարմատոյն Եսսեայ։ Եւ դուստր Դաւթի ծնանի զորդին Այ։

## Տնընդառաջին։

Քո փառաց Թագաւորին այսօր եկեալ 'ընծայութեամբ։ Կատարելով նոր զօրէնս քառասնօրեայ գալստեամբ։

## Ծաղկազարդին։

Աստ Եբրայեցւոց մանկունքն զերգ քերովբէիցն առեալ, հեթանոսական դասուց տօնակից վեհիցն եղեալ։

## Յարութեան։

Եւ ձայն զարթուցման առեմ, որ գոչէր 'ի բարձունսն։ 'Ի բարձունսն գոչէր։ Կրկնէ։ Ձայնառնէր 'ի սանդարամետս։ Կրկնէ։

## Նորկիրակէի։

Այսօր նոր արև հարեալ, 'ի նորահրաշ արեգակնէն. 'ի նորահրաշ։ Այսօր նոր շուշան ծաղկեալ 'ի նորատունկ բուրաստանէն։

## Համբարձման։

Այսօր անդրանիկն Հօր միածին որդին, 'յերկինս ելանել ադամային կերպիւ։ Նուագ նորոգից եղանակեն այսօր հոյլք հոգեղինաց երկնաւորացն խմբից։

## Հոգւոյ գալստեան։

Նուագեմք Հոգւոյն նուագս վայելչական։ Վայելչական բանիւ զարարչութիւն նախտանեմք։

## Վարդավառին։

Գոհար փայլուն փառք առեալ։ Կրկնէ։ Գոհար։

գոհանար ։ 'Ի վերնոց վայելիցն արժանեսցի ։
Կցուրդ ։ 'Ի վերեւ ։ 'Ի վերեր 'ի վեր վայելիցն ազգիզքեր ծաղիկ ծոճայլին ։ աղալքեր ։

Փոխման ։

Այսօր զարթուցել հրեշտակապետան ե_ կեալ, բերելով զբարեբանն, որսալ յաղ_ թող կուսին ։ Այսօր կոչեցայք առ քե_ րովբէից տէրն զուարթար բարձրելոյն և զբնա_ կարան Որդւոյն ։

Խաչի ։

Խաչդ 'ի կախմունսն երևեցաւ ծաղկեալ 'ի դրախտն մեծատունն . մխիթարիչ եղեալ մեղաց , նախագուշակ հօրն ադամայ ։ Ինչ 'ի այն փայտն եմք յուսացեալ , յոր տէր յիս բևեռեցաւ ։ և խաչակնքեալ երկր_ պագեմք տեսանել մեր նշանս ։

Հրեշտակապետաց ։

Գովեսա բևեկոսաց քաղցրաձայնեալ երգեմք ձեզ հրեշտակապետք, և հրեշտա_ կաց դասուցք ։

Առաքելոց ։

Աւետարանին որդւոյ, որ 'ի հօրէ ծագեալ ։ զաւաքեալսն քո անճառ լուսոյդ լցեալ ։ Տան լուսոյ ցուցեալ հայաստանեայց ազանց, մեծն Թաթէոս բարթողիմէոս փայլեալ ։

Մարգարէից ։

Ձայնիւ խօսողն անճառ խօսեցայ_ ծուք մեր մարգարէք . Քանզի պատմօղք զաստուածայինն յառաջագոյն շնչելութեն ։

Հայրապետաց ։

'Ի հիմնադրես տանն քոյ լուսաւորեալ ընծայք,

հայր և վարդապետ մեր հայրապետ Պետրոս ։

Օրհնութեան որ ասեն, մինչեւ մի ասեն ։

Ե Ր Գ ։

Ողորմեալդ յիմ , ով երջանիկն մեր քահանայ ։
Նմանեալ առաքելոյն, և մայ_ րենն մարգարէին ։
Այն, որ զգեստուցն էր յօրինող , զոր առաքելն միշտ զգենոյր ։
Տօրինէր զպատմուճանն , զոր 'ի չորից կազմեալ նիւթոց ։
'Ի կարմրոյ 'ի կապուտոյ ; 'ի բեհեզոյ 'ի ծիրանւոյ ։
Թել զթելն յօրինէր , կարգն առաջին էր կարկեհան ։
Եւ զօծումն զարշապարեն շուրջանակի բոլորաշէն ։
Եւ յընթացս զարշապարեն հնչէր եր_ կիր , ընծայր խորան ։
Արդ 'ի նոյն նմանութեն քո զմեր ուխտս յօրինէ ։
Յորժամ մտցես 'ի մեր խորանն , անդ_ յիշեսցես զմեր նուիրեցեալսն ։
Յորժամ առնես զպատարագն՝ , յիշեա՛ և զիս զբազմամեղս ։
Օի և մեզ Մելքիսեդեցի 'ի հիւսանգամ խոր զալստեանն ։
Հօրն փառք , Որդւոյն պատիւ և մեր Ոգւոյն յայժմ յաւիտեան ։
Յաւիտեանս յաւիտենից քեզ օրհնեալ 'ի համայնից ։

Շարական խնկարկութեան ։

ՅԱՅՍՄ յաւուր նուիրման ուխ_ տի տն տաճարիս , ժողովեալքս աստանօր 'ի խորհուրդ պաշ_ տաման պաղատանաց առաջնորդեայ մեք պատարագիս, խնկօք անուշիւք խուն_ կեալ

առեալ պարեմբ 'ի վերնայարկ սրահն խո_
րանին, Սուրբութե ընկալ զաղօթս մեր,
որ բուրումն անուշահոտ խնկոց տաշ_
խից և կինամոնաց ։ և զմատուցողքս
պահեա սրբութե միշտ և հանապազ քեզ
պաշտաւորել։ Բարեխօսութե մօր քոյ
և կուսին, ընկալ զաղաչանս քոց պաշտօ_
նէից։

Որ գերագոյն քան զերկինս պայծառա_
ցուցեր որ զեկեղեցի աւետմբ քո ըն, և
ըստ երկնայնոցն կարգեցեր 'ի սմա զդասս
առաքելոց, մարգարէից, որ վարդապե_
տաց։ Այսօր ժողովեալ դասք քահա_
նայից, սարկաւագաց, դպրաց և կղե_
րիկոսաց խունկ մատուցանեմք առաջի
քո տր 'յօրինակ ըստ հնումն զաքարի_
այ։ Ընկալ առ'ի մէնջ զխնկամուէր մաղ_
թանս, որ զպատարագն աբէլի զնոյն
և զաբրահամու։ Բարեխօսութե վերին
քո զօրաց միշտ անշարժ պահեա զաթոռ
հայկազնեայց։

Խնդա յոյժ դուստր լուսոյ մայր որ
կաթուղիկէ մանկամբ քո սիոն, զար_
դարեալ պճնեա զխորանապանծալի երկ_
նանման լուսաճեմ խորան. Զի օծեալ
ես, մինն 'ի վէրն անծախապէս 'ի քեզ
միշտ պատարագի, հօր 'ի հաշտութի;
մեզ 'ի քաւութի բաշխէ զմարմին և զա_
րիւն իւր որ։ Նա իւր կատարմանն որ
տնօրէնութեն, շնորհէ զխաղաղութի կանգ_
նողն տաճարիս։

Զանապականն կոյսն մարիամ ածածին
խոստովանի որ եկեղեցի, ուստի տեառ_
նացն անմարմնութե, և բաժակ մեզ
ուրախարար, Տուք օրհնութի նմա
հոգևոր երգով։

Սարկաւագն։ Օրհնեա տէր.

Քահանայն։ Օրհնեալ թագաւորութին
հօր։

Եւ ապա ժամամուտ ըստ պատշաճին,
կամ երգեալ 'ի ճաշու ժամուն։ Մ_
րոց զերբառագրութենքն կամ 'ի վերոյս գրեա_
տաւորութենս այսորիկ։

Սարկաւագն։ Եւ ևս խաղաղութե զտր
աղաչեսցուք։ Ընկալ, կեցո, և ողորմեա։
Օրհնեա տր։
Քահանայն։ Օրհնութի և փառք։
Խաղաղու։
Դպիրքն։ Եւ ընդ հոգւոյդ քում։
Սարկաւագն։ Այ երկրպագեսցուք։
Դպիրքն։ Առաջի քո տր։
Քահանայն։ Մեծ ածմէր, որոյ կարոց։

Եւ ապա փոխն և շարականն ըստ պատ_
շաճի, որ և երգեալ է 'ի ճաշուեմն։ Բայց
շարականքն ասին ըստ զբաղդրու_
թեն, որ նշանակէ 'ի վերոյն պատշա_
ճաւորութենս այսորիկ։

Սարկաւագն։ Օրհնեա տէր։
Քահանայն։ Զի քոյ է կարողութի։
Սարկաւագն։ Պռօսխումէ։

Եւ ապա Սբ ած, այսպէս։

Սբ ած, Սբ և հզօր, Սբ և անմահ
ողորմեա մեզ։
Սարկաւագն։ Եւ ևս խաղաղութե զտր
աղաչեսցուք։
Դպիրքն։ Տր ողորմեա։
Սարկաւագն։ Վս խաղաղութե ամ
աշխարհի, և հաստատութե սրբոյ եկե_
ղեցւոյ, զտր աղաչեսցուք։
Դպիրքն։ Տր ողորմեա։
Սարկաւագն։ Վս ամ որ և ուղղափառ
եպիսկոպոսաց, զտր աղաչեսցուք։
Դպիրքն։ Տր ողորմեա։

Ապա յետ յերեքսրբէին զփոխն, յետոյ և
առաքելոյն ընթերցուածն, ըստ պատ_
շաճի և աւուրն, եթէ փառաւորաց
իցէ, եթէ առաքելականաց իցէ, և եթէ
եպիսկոպոսաց իցէ։ Բայց կաթուղիկէին
կցամ

Կամ նախնկապետն հայոց , եթէ իցէ հերձուածող կամ հերետիկոս , ոչ նորէք , այլ ուրեք յիշեցի : Իսկ եթէ իցէ ուղղափառ յիշեցի միայն ՚ի թեմին և ՚ի վիճակին նորա , այլ ոչ եր_ ջէք առաքելոյ նորին :

Սարկաւագն : Վասն սրբազան Պապին մերոյ տեառն , Այս Անուն : Եւ Պատ_ րիարքին , կամ Արքեպիսկոպոսին , կամ Եպիսկոպոսին մերոյ տեառն , Այս Անուն : զՏէր աղաչեսցուք :

Ժողովուրդն . Տէր ողորմեա .

Սարկաւագն : Վասն վարդապետաց , քա_ հանայից , սարկաւագաց , դպրաց , և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ . զՏէր աղա_ չեսցուք :

Ժողովուրդն : Տէր ողորմեա :

Սարկաւագն : Վասն քրիստոսասէր թա_ գաւորաց և ամենայն իշխանաց , զօրաց և զօրավարաց նոցին , զՏէր աղաչեսցուք :

Ժողովուրդն : Տէր ողորմեա :

Սարկաւագն : Վասն հոգւոցն հանգու_ ցելոց , որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ՚ի Քրիստոս ննջեցին , զՏէր աղաչեսցուք :

Ժողովուրդն : Յիշեա տէր և ողորմեա :

Սարկաւագն : Եւս և վասն միաբանու_ թեան ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ , զՏէր աղաչեսցուք :

Ժողովուրդն : Տէր ողորմեա :

Սարկաւագն : Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալի յանձն արասցուք :

Ժողովուրդն : Քեզ տէր յանձնեսցուք :

Սարկաւագն : Ողորմեա մեզ տէր Աստուած մեր , ըստ մեծի ողորմութեան քում : Աս_ սասցուք ամենեքեան միաբանութեամբ :

Ժողովուրդն : Տէր ողորմեա , տէր ողորմեա , տէր ողորմեա :

Սարկաւագն : Օրհնեա տէր :

Քահանայն : Զի ողորմած և մարդասէր :

Ժողովուրդն , Ամէնն , և Հաւատամքն , ՚ի ձայնաւոր գիր :

Եւ ասասցեն զՀաւատամքն :

Հաւատամք ՚ի մի Աստուած հայրն ամենակալ ՚յարարիչն երկնի և երկրի , երևելեաց և աներևու_ թից : Եւ ՚ի մի տէր Յիսուս Քրիստոս , ՚յորդին Աստուծոյ , ծնեալ ՚յԱստուծոյ հօրէ միածին . նախքան զամենայն յաւիտեանս : Աստուած ՚յԱստուծոյ , լոյս ՚ի լուսոյ , Աստուած ճշմարիտ , ՚յԱստուծոյ ճշմարտէ , ծնունդ և ոչ արարած , Նոյն ինքն հաւա_ գոյակից հօր , որով ամենայն ինչ եղև ՚յերկինս և ՚ի վերայ երկրի , երևելիք և աներևոյթք : Որ յաղագս մեր մարդկան , և վասն մերոյ փրկութեան իջեալ ՚ի յերկնից մարմնացաւ , մարդացաւ , ծնաւ կատարելապէս ՚ի Մարիամայ սրբոյ կուսէն , Հոգւովն սրբով : Որով էառ մարմին հոգի և միտ , և զամենայն որ ինչ է ՚ի մարդ ճշմարտապէս և ոչ կարծեօք : Չարչարեալ , խաչեցեալ , թաղեցեալ , ՚յերրորդ աւուր յարեալ , ելեալ ՚ի յերկինս նովին մարմնովն , նստաւ ընդ աջմէ հօր : Գալոց է նովին մարմնովն և փառօք հօր ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս : Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան : Հաւատամք և ՚ի սուրբ Հոգին ՚յանեղն և ՚ի կատարեալն , որ ՚ի հօրէ և ՚յորդւոյ բղխի : Որ խօսեցաւ ՚յօրէնս և ՚ի մարգարէս , և ՚յաւետարանս : Որ էջն ՚ի յորդանան , քարոզեաց զառաքեալսն , և բնակեցաւ ՚ի սուրբսն : Հաւատամք և ՚ի մի միայն ՚յընդհանրական և ՚յառաքելական եկեղեցի : ՚Ի մի մկրտութիւն , յապաշխա_ րութիւն , ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մե_ ղաց : ՚Ի յարութիւն մեռելոց : ՚Ի դատաս_ տանն յաւիտենից հոգւոց և մարմնոց : ՚Յարքայութիւնն երկնից : Եւ ՚ի կեանսն յաւիտենականս :

Իսկ որք ասենն էր երբեմն , յորժամ ոչ էր որդի ; կամ էր երբեմն , յորժամ ոչ էր սուրբ Հոգին : Կամ թէ ՚յոչընչէ եղեն , կամ ՚յայլմէ էութենէ ասեն լինել զորդին Աստուծոյ , և կամ զսուրբ Հոգին : Եւ թէ փոփոխելի են ,

են, կամ աղաչելի, զայնպիսեացն սրբոյ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի:

Սարկաւագն: Օրհնեա տէր.
Քահանայն: Իսկ մեզ փառաւորես:
Սարկաւագն: Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:
Դպիրքն: Տէր ողորմեա:

Սարկաւագն:

Եւ ևս հաւատով աղաչեսցուք և խնդրեսցուք ՚ի Տեառնէ Այ, և ՚ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ՚ի ժամուս պաշտաման և աղօթից: Զի արժանի ընդունելութեան արասցէ, լուիցէ ձայնի աղաչանաց մերոց.: Ընկալցի զխնդրուածս սրտից մերոց, թողցէ զյանցանս մեր, ողորմեսցի ՚ի մեզ: Աղօթք մեր և խնդրուածք յամ ժամ մտցեն առաջի մեծի տէրութեան նորա: Եւ նա տացէ մեզ միաբան միով հաւատով, արդարութեան վաստակել ՚ի գործս բարիս, Զի զողորմութեան շնորհն իւր արասցէ ՚ի վերայ մեր, Տէր ամենակալ, կեցուսցէ, և ողորմեսցի:
Դպիրքն: Կեցո՛ Տէր:
Սարկաւագն: Զժամ որ պատարագիս, և զառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել, հաւատով ՚ի Տեառնէ խնդրեսցուք:
Դպիրքն: Շնորհեա Տէր:
Սարկաւագն: Զհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց ՚ի Տեառնէ խնդրեսցուք:
Դպիրքն: Շնորհեա Տէր:
Սարկաւագն: Զքաւութիւն և զթողութիւն յանցանաց մերոց, ՚ի Տեառնէ խնդրեսցուք:
Դպիրքն: Շնորհեա Տէր:
Սարկաւագն: Զսուրբ խաչին մեծ և կարող զօրութիւն, յօգնականութիւն անձանց մերոց, ՚ի Տեառնէ խնդրեսցուք:
Դպիրքն: Շնորհեա Տէր:

Սարկաւագն: Եւ ևս և զմի միաբանութեան ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ, զՏէր աղաչեսցուք:
Դպիրքն: Տէր ողորմեա:
Սարկաւագն: Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Այ ամենակալի յանձն արասցուք:
Դպիրքն: Քեզ Տէր յանձնեսցուք:
Սարկաւագն: Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում: Ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:
Դպիրքն: Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Սարկաւագն: Օրհնեա տէր:
Քահանայն: Որպէս զի արժանա:
Դպիրքն: Եւ ընդ հոգւոյդ քում:
Սարկաւագն: Առ Այ երկրպագեսցուք:
Դպիրքն: Առաջի քո Տէր:
Քահանայն: Խաղաղութեամբ քով Քս:
Սարկաւագն: Օրհնեա տէր:
Քահանայն: Տէր Ած օրհնեսցէ:

Սարկաւագն:

Մի ոք ՚յերախայից, մի ոք ՚ի թերահաւատից, և մի ոք ՚յապաշխարողաց, և ՚յանմաքրից մերձեսցի ՚յԱստուածային խորհուրդն:

Դպիրքն:

Մարմին տէրունական, և արիւն փրկչական կայ առաջի: Երկնային զօրութիւնքն ՚յաներեւոյթս երգեն, և ասեն անհանգիստ բարբառով, Սբ, Սբ, Սբ, Տէր զօրութեանց:

Սարկաւագն:

Սաղմոս ասացէք Տեառն Այ մերոյ, դպիրք ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգեւորս:

Եւ դպիրքն եղանակեն զսրբասացութիւն, ըստ խորհրդոյ աւուրն:

Ծն,

Ծննդեան, Աւետման, Աստուածածնի։

Բազմութիւնք հրեշտակաց, և զօրաց երկնաւորաց, իջեալ յերկնից ընդ մեծին Թագաւորին։ Որք երգէին և ասէին, սա է որդին Այ։ Ամենեքեան աւետեցուք, ուրախ լերուք երկինք, և ցնծասցեն հիմունք աշխարհի. զի Այն յաւիտենական յերկրի երևեցաւ, և ընդ մարդկան շրջեցաւ, զի կեցուսցէ զանձինս մեր։

Աւագի Հինգշաբաթի։

Որ վերամբարձիս 'ի կառս հրաշանեաց քառակերպեանս անճառելի բանդ Այ. Անյօր իջեալ յերկնայնոցն վն քո արարածոցս, յանձն առեր բազմիլ ընդ աշակերտս։ Եւ սրբեցեր և քերովբէիցն հնազանդեալ զարմանային. Եւ այն սուրբ թիւքն վերին զօրացն, զարմանացեալ աղաղակէին ասելով սբ, սբ, սբ տր զօրութեանց։

Զատկին։

Որ Հոգւովն սուրբ տր Այ մեր, խաչեցաւ վն մեր, թաղեցաւ, և յարեաւ հաւատարիմ եղև աշխարհի, և համբարձաւ փառօք։ Եկայք ժողովուրդք զօրհնութիւն ընդ հրեշտակս երգեսցուք աստուածոյ ասելով. սբ, սբ, սբ ես տր Այ մեր։

Միքայէլի. Գաբրիէլի, Հրեշտակաց։

Հրեշտակային կարգաւորութեամբ լսեր Այ զքո սբ զենեցեցի։ Հազարք հազարաց հրեշտակապետք կան առաջի քո, և բիւրք բիւրոց հրեշտակք պաշտեն զքեզ տր։ Եւ 'ի մարդկանէ հաշտեցար ընդունել զօրհնութիւն, ձայնիւ խորհրդականաւ, սբ, սբ, սբ տր զօրութեանց։

Մարտիրոսաց։

Արիութիւն սրբոց մեծ ես, և անհաւասարելի զինուորութիւն հրեշտակաց օրհնեն զքեզ, և ասեն։ Փառք 'ի բարձունս Այ, և յերկիր խաղաղութիւն։

Պահոց. Ննջեցելոց.

Ի՛ յիշատակի հանգուցելոցն ընկալ հայր սբ մարդասէր զպատարագս, և համարեա՛ զհոգիս նց 'ի թիւս սրբոց քոց, յարքայութեանդ երկնից։ Մանաւանդ զի հաւատով մատուցուք զպատարագս, հաշտեսցի Այ՝ութիւնդ և հանգուսցէ զհոգիս նոցա։

Մարգարէից. Առաքելոց. Հայրապետաց։

Ամենակալ ես տր զօրութեանց, որ թագաւորդ ես յաւիտենից, որ նստիս 'յերկնից 'ի յերկինս, և լոյս ծագես 'յարարածս քո, Որ խոնարհութեամբ իջեր 'յերկնից, զքեզ պատարագս մատուցանեմք։ Եւ սբ զանուն քո փառաւորեմք, տր որ պսակիչդ ես քոց սրբոց առաքելոց։ Վն զի սքա՛ են մեզ բարեխօս տր ամենակալ 'ի քում արքայութեանդ։

Եւ եթէ հանդիսաւոր օր լինի, և զմեր խորհուրդն քերովբէից կամիցիս, այս է արարողութիւն։

Յորժամ բարձրանայն առէ։ Տր Այ օրհնեսցէ զամենեսեանդ։

Սարկաւագն ։ Սաղմոս ասասջիք տն այ ։

Եւ Դպիրքն երգեն զսրբասացութիւնն ըստ խորհրդոյ աւուրն կանոնեալ ։

Սարկաւագն ։ Մի ոք 'յերախայից ։
Դպիրքն ։ Մարմին տէրունական ։

Եւ զայն խնկարկելով 'ի մէջ խորհրդա-նոցն ։

Սարկաւագն ։ 'Ձայրեւ ու ենար զխորան իւր, և ինքն որոշ փեռայ, զի ելանէ 'յա-ռաջասաւոր իւրմէ ։
Դպիրքն ։ Եւ ընծայ 'նա որպէս հոգւոյ 'յընթանալ զճանապարհս իւր ։
Սարկաւագն ։ Որք զքերոբէիցն ։
Դպիրքն ։ Խորհրդաբար նկարագրա-նիմք ։

Եւ զայն 'յարեւելից կողմն ։

Սարկաւագն ։ Ճանապարհ արարէք այն-միկ, որ նստի 'յերկինս երկնից ընդ ար-ևելս ։
Դպիրքն ։ Եւ կենդանարար երրորդու-թեան զերեքսրբեան օրհնութիւն մատու-ցանեմք ։

Եւ զայն 'ի հարաւային կողմն ։

Սարկաւագն ։ Աճ 'ի հարաւոյ եկեսցէ; Եւ սբն 'ի փառան լեռնէ ։
Դպիրքն ։ Զամ աշխարհականս 'ի բաց դնելով զհոգս ։

Եւ զայն 'յարեւմտան կողմն ։ Եւ բար-ձր ձայնիւ խորհրդոյն ասասցէ հան-դարտութբ ։

Համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր, համբարձցին դրունք յաւիտենից, և մտցէ Թագաւոր փառաց ։

Եւ պատարագողն խնկարկէ, և հան-ցանէ ։

Ով է սա Թագաւոր փառաց, տէր հզօր զօրութբ իւրով, տէր կարող 'ի պատե-րազմի ։
Դպիրքն ։ Որպէս զի զԹագաւորն ամենեցուն ընդունիցիմք ։
Երեցն ։ Համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր, համբարձցին դրունք յա-ւիտենից, և մտցէ Թագաւոր փա-ռաց ։
Քահանայն ։ Ով է սա Թագաւոր փա-ռաց, և տէր զօրութեանց ։
Դպիրքն ։ Եւ զհրեշտակային հանդի-սապէս ընծայեալ բերեմք զնուէր ։
Երեցն ։ Սա ինքն է Թագաւոր փա-ռաց ։

Եւ պատարագողն երկրպագէ ահիւ և դողութբ, և առնու 'ի ձեռաց սար-կաւագին ։ և խաչակնքէ ✠ 'ի վերայ ժո-ղովրդեանն ասելով ։

Օրհնեալ եկեալ անուամբ տն ։
Դպիրքն ։ Ալէլուիա ։

Այս վերոյգրեալ վերաբերութիւնս յառ-կայս պատարագի սրբազան խոր-հրդոյն մատնեալ հայրենան էր ։ Իսկ այ-տի պարտէ առնել զնոյն արարողու-թիւն զինչ արարողութեան, և այլ ասա ։ Բայց որք կամին առնել ըստ սովորութեան, նորա պարտին խնա-մալ և ծանուցանել ժողովրդեանն, թէ ասա ընծայքն են դեռ և ոչ հաց և գինի, զի տակաւին ոչ են սրբագործա-ռեցեալք ։ Եւ ոչ որոյ ոչ են դեռեւս երկրպագելիք, այլ միայն պատուե-լիք ։

Այլև որք ասա կամին առնել զարարո-ղութիւնս զայս, ոչ պարտին ընծայիցն խոյ

խաչակնքել ՚ի մէջ ժողովրդեան, և ոչ
երկրպագանել զի դեռ ևս ոչ է անա_
ւոր խորհուրդ. և ոչ Թագր փառաց.

Ուրբ ամենեքեան պարտին լսել յետ
սրբազնագրութեն, այսինքն յետ աւետէ
կներէքն, և աւետէք ՚նուանէին:

Սարկաւագն:

Եւ ևս հաւատով և սրբութեամբ կացցուք յաղօթս ա_ ռաջի սրբոյ սեղանոյս այ ա_ հիւ: Մի ՚ի խղճիւ և գայթակ_ ղութեամբ, մի նենգութեամբ, խորաման_ կութեամբ, մի պատրանօք և խաբէութեամբ, մի երկմտութեամբ, և մի թերահաւատութեամբ: Այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միա_ միտ սրտիւ, կատարեալ հաւատով, լցեալ սիրով, լի և առաւելեալ ամ գոր_ ծովք բարութեան: Կացցուք յաղօթս ա_ ռաջի սրբոյ սեղանոյս այ, և գտցուք զողորմութեան շնորհս: ՚Յաւուր յայտ_ նութեան և ՚ի միւսանգամ գալստեան տն մերոյ և փրկչին Յի Քի: Կեցուսցէ և ողոր_ մեսցի:

Դպիրքն: Կեցո տր, և ողորմեա:
Սարկաւագն: Օրհնեա տէր:
Քահանայն: Շնորհօք և մարդասիրու:
Խաղաղութի ընդ ամենեսեան:
Դպիրքն: Եւ ընդ հոգւոյդ քում:
Սարկաւագն: Առ այ երկիրպագեսցուք:
Դպիրքն: Առաջի քո տր:

Սարկաւագն:

Ողջոյն տուք միմեանց, ՚ի համբոյր սրբութեն, և որք ոչ էք կա_ րող հաղորդիլ ած-ային խոր_ հրդոյս, առ դրունս ելէք, և աղօթեցէք:

Դպիրքն:

Քս ՚ի մէջ մեր յայտնեցաւ, որ էնն Աժ աստ բազմեցաւ;
Խաղաղութեն ձայն հնչե_ ցաւ, ՚ի ողջունիս հրաման տուաւ, թշնամութիւնն հեռացաւ, սէրն ընդ համօրէս սփռեցաւ:
Արդ պաշտօնեայք բարձեալ զձայն տուք օրհնութի ՚ի մի բերան, միասնական Աժութեն, որում սրովբէքն են սրբա_ բան:

Ոմանք և զայս ասեն ՚ի հնամնդիսի տօնի:

Սարկաւագն:

Որք հաւատով կայք յան_ դիման ՚ի սեղանոյս արքա_ յական, տեսջէք բազմեալ զքն արքայն, և շուրջ պատեալ զօրք վերինական:

Դպիրքն:

Վերհամբառնամք զաչս ունելով, և պաղատեմք զայս ասելով, զմեղս մեր մի յիշեսցես, այլ գթութե քո քաւեսցես:
Ընդ հրեշտակացն օրհնեմք զքեզ, և ընդ սրբոց տր փառք քեզ:

Սարկաւագն:

Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բար_ ւոք կացցուք, և նայեսցուք զգու_ շութեամբ:
Դպիրքն: Առ քեզ Աժ:
Սարկաւագն: Պատարագ քն մատչի գառն այ:
Դպիրքն: Ողորմութի, և խաղաղու_ թի, և պատարագ օրհնութեն:
Սարկաւագն: Օրհնեա տէր.

Քահանայն ։ Շնորհք սէր , և ա̃ծայ ։
Դպիրքն ։ Եւ ընդ հոգւոյդ քում ։

Սարկաւագն ։

Զգուշունս , զգուշունս ա̃մ խնամոտութե̃ եւզգուշութե̃ ։
՚Ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր ա̃ծային երկիւղիւ ։
Դպիրքն ։ Ունիմք առ քեզ տ̃ր ամենակալ ։
Սարկաւագն ։ Եւ գոհացարուք զտ̃է բոլոր սրտիւ ։
Դպիրքն ։ Արժան և իրաւ ։
Սարկաւագն ։ Օրհնեա́ տէր ։
Քահանայն ։ Եւ ընդ սերոբէեան և ։

Իսկ ՚ի Հինանցեկին առաւօտն ասասցէ զկէսն ;
Արժան իրաւն . ասեն զայս ։

Սարկաւագն ։

Եւ զստոյգ փրկութե̃ , որ միշտ ընդ ա̃մ տեղիս գոհութի̃ մա̃տուցանեմք քեզ քս̃ ։ Որով և զհրաշալի զյարութի̃ քո գովեն զօրութիւք , սարսին սերոբէք , և դողան քերոբէքն , և իշխանութիւք վերին պետութեանցն պարառեալ ձայնիւ երգանակեն և ասեն ։

Դպիրքն ։

Ս̃ , ս̃ , ս̃ տ̃ր զօրութե̃ց , լի են երկինք և երկիր փառօք քո , օրհնութի̃ ՚ի բարձունս ։ Օրհնեալ , որ եկիր , և գալոց ես անուամբ տ̃ն , ովսաննայ ՚ի բարձունս ։
Սարկաւագն ։ Օրհնեա́ տէր ։
Քահանայն ։ Առէք կերէք .
Դպիրքն ։ Ամէն ։
Սարկաւագն ։ Օրհնեա́ տէր ։

Քահանայն ։ Արբէք ՚ի սմանէ ։

Դպիրքն ։

Ամէն ։ ՀԱՅՐ երկնաւոր , որ զորդիդ քո ետուր ՚ի մահ վ̃ն մեր , պարտապան պարտեաց մերոց ։ Հեղմամբ արեան նորա , աղաչեմք զքեզ ողորմեա քո բանաւոր հօտիս ։
Սարկաւագն ։ Օրհնեա́ տէր ։
Քահանայն ։ Եւ զքոյս ՚ի քոյոց ։

Դպիրքն ։

Յա̃մի օրհնեալ ես տ̃ր , օրհնեմք զքեզ , գովեմք զքեզ . Գոհանամք զքէն , աղաչեմք զքեզ տ̃ր ա̃ծ մեր ։
Սարկաւագն ։ Օրհնեա́ տէր ։
Քահանայն ։ Խաղաղութի̃ ընդ ամե̃ ։
Դպիրքն ։ Եւ ընդ հոգւոյդ քում ։
Սարկաւագն ։ Ա̃յ երկրպագեցուք ։
Դպիրքն ։ Առաջի քո տ̃ր ։

ՈՐԴԻ ա̃յ , որ պատարագեալ հօր ՚ի հաշտութի̃ , հաց կենաց բաշխիս ՚ի մեզ , հեղմամբ արեան քո ս̃բ , աղաչեմք զքեզ ողորմեա́ քո փրկեալ հօտիս ։
Սարկաւագն ։ Օրհնեա́ տէր ։
Քահանայն ։ Որպէս զի եղիցի սա ։

Դպիրքն ։

ՈԳԻ ա̃յ , որ զխաւարանցն քո խորհուրդ իջեալ ՚ի յերկնից կատարես ՚ի ձեռս մեր , հեղմամբ արեան սորա , աղաչեմք զքեզ հանգո զհոգիս մեր ննջեցելոցն ։
Սարկաւագն ։ Օրհնեա տէր ։

Քա_

Քահանայն : Ընդ որս և մեզ այց :
Դպիրքն : Յիշեա՛ տէր և ողորմեա՛ :
Քահանայն : Զծածնեն սրբոյ կաւ :
Դպիրքն : Յիշեա՛ տէր և ողորմեա՛ :

Մաղթանսն ՚ի յաջակողմն սեղանոյն ձեռնամբ ասասցէ :

Առաքելոց սրբոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, և ամ հայրապետաց սրբոց : Զառաքելագործ եպիսկոպոսաց, երիցանց, ուղղափառ սարկաւագաց, և ամ սրբոց : Եղիցի յիշատակ ՚ի սմա պատարագս, աղաչեմք :
Դպիրքն : Յիշեա՛ տէր և ողորմեա՛ :

Կիրակէից յարութեան ասա զայս :

Օրհնեալ, գովեալ, և փառաւորեալ հրաշալի, և ամփառ յարութեան քո երկրպագանեմք :
Դպիրքն : Փառք յարութեան քո տէր :

՚Ի տօնս սրբոց զայս ասա :

Մաղթանքն : Սուրբ և ամենահաճոյ, մարգարէին, կամ հայրապետին, կամ առաքելոյն, կամ մարտիրոսին, Զայս անուն : որոյ այսօր զյիշատակն կատարեմք, Եղիցի յիշատակ ՚ի սմա պատարագս աղաչեմք :
Դպիրքն : Յիշեա՛ տէր և ողորմեա՛ :

Մաղթանքն :

Զնախընթացն մերոյ, և առաջին լուսաւորչացն սրբոց . Թադէոսի, և Բարթուղիմէոսի առաքելոցն, և Գրիգորի լուսաւորչին . Զարիստակեսի, Վրթանեսի, Յուսկան, և Գրիգորիսի ; Ներսեսի, Սահակայ ; Դանիէլի, և Խադայ, Մեսրոպայ վարդապետին, և Գրիգորի նարեկացւոյն, և Ներսեսի կլայեցւոյն : Եւ ամ սրբոց հովուաց, և հովուապետացն հայաստանեայց :
Եղիցի յիշատակ ՚ի սմա պատարագս, աղաչեմք :
Դպիրքն : Յիշեա՛ տէր և ողորմեա՛ :

Մաղթանքն :

Միանձնեցելոց սրբոց, առաքինասէր և ամենայն կրօնաւորացն, Պօղոսի, Անտոնի, Պօղայ, Մակարայ, Ոնոփրեայ, աբբայ Մարկոսի, Սերապիոնի, Նեղոսի, Արսենի, Եւագրի : Յոհաննիսեանց, և Սկեւռեանց, սրբոց Ոսկեանց, և Սուքիասեանց, և ամ սրբոց հարց, և աշակերտելոց նոցին ընդ տիեզերս .
Եղիցի յիշատակ ՚ի սմա պատարագս, աղաչեմք :
Դպիրքն : Յիշեա՛ տէր և ողորմեա՛ :

Մաղթանքն :

Թագաւորաց հաւատացելոց սրբոց, Աբգարու Կոստանդիանոսի, Տրդատայ, և Թէոդոսի, և ամ բարեպաշտ թագաւորաց, և ամենայն իշխանաց : Եղիցի յիշատակ ՚ի սմա պատարագս, աղաչեմք :
Դպիրքն : Յիշեա՛ տէր և ողորմեա՛ :

Մաղթանքն :

Ընդ համօրէն ամ հաւատացելոց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, և ամ չափու հասակի հաւատով և սրբութեամբ ՚ի քս ննջեցելոց : Եղիցի յիշատակ ՚ի սմա պատարագս, աղաչեմք :
Դպիրքն : Յիշեա՛ տէր և ողորմեա՛ :
Սարկաւագն : Օրհնեա՛ տէր .
Քահանայն : Եւ հաստատել զսրբազան պապն մեր :

Սար-

Սարկաւագն ։

Գոհութիւն և փառաբանութիւն մատուցանեմք քեզ Տէր Աստուած մեր, վասն սուրբ և անմահ պատարագիս, որ 'ի վերայ սրբոյ սեղանոյս ։ Զի դու մեզ 'ի սրբութիւն կենդանութեան պարգևեցեր ։ Սովաւ շնորհեա զսէր, զհաստատութիւն, և զցանկալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, սրբոյ եկեղեցւոյ, և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց ։ Եւս առաւել սրբազան Փափին մերոյ տեառն, Այս անուն ։ և պատուական Պատրիարգին մերոյ. Կամ, Արքեպիսկոպոսին կամ. Եպիսկոպոսին, տեառն. Այս անուն ։ Եւ քահանայիս, որ զպատարագս մատուցանէ ։

Իսկ Կաթուղիկոսն կամ Եպիսկոպոսն հայոց եթէ իցէ հերետիկոս կամ հերձուածող, ոչ երբէք և ոչ ուրեք անուանիցի ։ Բայց եթէ իցէ ուղղափառ անուանիցի միայն 'ի ներքոյ Թեմի և վիճակի, և ոչ արտաքոյ նորին ։

Եւ վասն զօրութեան և յաղթութեան Թագաւորաց քրիստոնէից, և իշխանացն բարեպաշտից. Աղաչեսցուք և խնդրեսցուք և վասն հոգւոցն հանգուցելոց ։ Եւս առաւել վասն հանգուցելոց րաբունապետացն մերոց, և շինողաց սրբոյ եկեղեցւոյս, և որք ընդ հովանեաւ սորին են հանգուցեալ ։ Ազատութիւն եղբարց մերոց գերելոց, և շնորհ առաջի կայ ժողովրդեանս ։ Հանգիստ հաւատով և սրբութեամբ 'ի քէն կատարելոցն ։ Եղիցի յիշատակ 'ի սմա պատարագս, աղաչեմք ։

Դպիրքն ։ Ըստ ամենայնի և յաղագս ամենեցուն ։

Սարկաւագն ։ Օրհնեա տէր ։

Քահանայն ։ Եւ եղիցի ողորմութիւն ։

Դպիրքն, Եւ ընդ հոգւոյդ քում ։

Եւ սարկաւագն քարոզէ 'ի Թիւ ։

Եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ։

Դպիրքն ։ Տէր ողորմեա ։

Սարկաւագն ։ Ամենայն սրբովք, զորս յիշատակեցաք, և առաւելապէս, զՏէր աղաչեսցուք ։

Դպիրքն ։ Տէր ողորմեա ։

Սարկաւագն ։ Վասն մատուցանողաց սրբոյ և աստուածային պատարագիս, որ 'ի վերայ սրբոյ սեղանոյս, զՏէր աղաչեսցուք ։

Դպիրքն ։ Տէր ողորմեա ։

Սարկաւագն ։ Որպէս զի Տէր Աստուած մեր, որ ընկալաւ զսա 'ի սուրբ յերկնային և յիմանալի իւր մատուցարանն. և զփոխանակն առաքեսցէ առ մեզ զշնորհս և զպարգևս Հոգւոյն սրբոյ. զՏէր աղաչեսցուք ։

Դպիրքն ։ Տէր ողորմեա ։

Սարկաւագն ։ Ընկալ, կեցո, և ողորմեա, և պահեա զմեզ Տէր քոյին շնորհիւդ ։

Դպիրքն ։ Կեցո Տէր և ողորմեա ։

Սարկաւագն ։ Զամենասուրբ զԱստուածածին, զմիշտ կոյսն Մարիամ, հանդերձ ամենայն սրբովք յիշելով, զՏէր աղաչեսցուք ։

Դպիրքն ։ Տէր ողորմեա ։

Սարկաւագն ։ Եւս և վասն միաբանութեան ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք ։

Դպիրքն ։ Տէր ողորմեա ։

Սարկաւագն ։ Զանձինս մեր, և զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձնարասցուք ։

Դպիրքն ։ Քեզ Տէր յանձն եղիցուք ։

Սարկաւագն ։ Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում ։ Ասասցուք ամենեքեան միաբանութեամբ ։

Դպիրքն ։ Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա ։

Սար

Սարկաւագն: Օրհնեա՛ տէր:
Քահանայն: Եւ տուր մեզ համարձ:

Դպիրքն:

ՀԱՅՐ մեր որ 'յերկինսդ ես, սբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո, որպէս 'յերկինս եւ 'յերկրի, զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց, եւ մի տանիր զմեզ 'ի փորձութիւն: այլ փրկեա 'ի չարէ:
Սարկաւագն: Օրհնեա՛ տէր:
Քահանայն: Զի քո է արքայութիւն:
Դպիրքն: Եւ ընդ հոգւոյդ քում:
Սարկաւագն: Այ երկրպագեսցուք:
Դպիրքն: Առաջի քո տր:

Քահանայն խոնարհի, եւ ասէ զա- ղօթ որդն խոնարհեցն 'ի վայր: Եւ սար- կաւագն ձայնէ:

Օրհնեա՛ տէր:
Քահանայն: Քեզ Տեառն տեառն մերում:

Եւ սարկաւագն բարձր ձայնէ:

Պռօսխումէ:
Քահանայն: 'Ի սրբութիւն սրբոց:
Դպիրքն: Միայն սբ, միայն տր յս քս, 'ի փառս այ հօր: Ամէն:
Սարկաւագն: Օրհնեա՛ տէր:
Քահանայն: Օրհնեալ հայր սբ:
Դպիրքն: Ամէն:
Սարկաւագն: Օրհնեա՛ տէր:
Քահանայն: Օրհնեալ որդին սբ:
Դպիրքն: Ամէն:
Սարկաւագն: Օրհնեա՛ տէր:
Քահանայն: Օրհնեալ հոգին սբ:
Դպիրքն: Ամէն:

Սարկաւագն: Օրհնեա՛ տէր:
Քահանայն: Օրհնութիւն եւ փառք հօր եւ:
Դպիրքն: Ամէն: Հայր սբ, Որդին սբ, Հոգին սբ: Օրհնութիւն հօր եւ որդւոյ եւ սրբոյ հոգւոյն: Այժմ եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:
Սարկաւագն: Օրհնեա՛ տէր:
Քահանայն: 'Ի սբ 'ի սբ պատուական:

Եւ խաչակնքէ քահանայն ձեռովն 'ի վր ծա- ղկոցեանն, եւ բարձեն զխորհուրդն: Եւ բարոզէ սարկաւագն բարձր:

ՍԱՂՄՈՍ ասացէք տն այ մերոյ դպիրք ձայնիւ քաղցրութե զերգս հոգեւորս: Զի սմա վայելեն սաղմոսք, եւ օրհնութիւք, ալէլուք եւ երգք հոգեւորք: Պաշտօնեայք հանդերձ նորոգ սաղմոս ասացէք, եւ զտր յերկինս օրհնեցէք:

Դպիրքն Եղանակեն:

ՔՍ պատարագեալ բաշխի 'ի միջի մերում. Ալէլուիա:
Զմարմին իւր տայ մեզ կերակուր, եւ զսբ արիւն իւր ցօղէ 'ի մեզ, Ալէլուիա:
Մատիք առ տր, եւ առէք զլոյս, Ալէլուիա:
Ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է տր: Ալէլուիա:

Օրհնեցէք զտր յերկինս: Ալէլուիա:
Օրհնեցէք զնա 'ի բարձունս: Ալէլուիա:
Օրհնեցէք զնա ամ հրեշտակք նորա: Ալէլուիա:
Օրհնեցէք զնա ամ զօրութիւնք նորա: Ալէլուիա:

Երկուշաբթի ։

ԼՈՅՍ զուարթ և ճառագայթ հօր, ծագումն Լուսոյ, բան և ծնունդ ։ Ո՛ր կանգնեցեր յեօթնեանց սեանց զեկեղեցի քս, ածեալ ՝ի սպասն զեղձն պարարական ։ Շնորհեա՛ մեզ կերակրել ՝յիմաստութենէ սեղանոյ քում ։ Ո՛ղորմեա ։

Երեքշաբթի ։

ՀԱՑ կենաց և անմահութեան, ճաշակ քս և անճառ, սոսկալի խորհուրդ ։ Ո՛ր ՝ի յերկնից իջեր կենդանութեան մարդկան ։ Կենդանի և կենդանարար ։ Պարգևեա՛ քաղցելոցս զքաղցրութեան քում ճաշակումն ։ Ո՛ղորմեա ։

Չորեքշաբթի ։

ԴՈՒՌՆ երկնից, և ճանապարհ արքայութեան, տէր երկնի, ՝ի երկնայնոցն օրհնեալ դասուց ։ Ո՛ր զմարմին քո, և զարիւնդ անապական բաշխեցեր առաքելոցն ։ Մաքրեա՛ զմեզ հաղորդել սրբութեան քում խորհրդոյ, Ո՛ղորմեա ։

Հինգշաբթի ։

ԲԱՆ հօր և քահանայապետ քս, յանմարմնոցն գովեալ ՝ի բարձունս ։ Ո՛ր ՝ի վերայ խաչին պատարագեալ մարմնով հեղեր զարիւնդ ՝ի փրկութիւն ։ Արբեա՛ զմեզ մեր կենարար և փրկական բաժակ քո արեամբդ ։ Ո՛ղորմեա ։

Ուրբաթ ։

ՎԷՄ հոգևոր և գլուխ անկեան օծեալ, բարեբանեալ ՝ի հրեշտակաց ։ Ո՛ր ՝ի խաչին բացեր զկողահոս աղբիւրդ ; զանմահութեն ցօղեալ տիեզերաց ։ Արբո՛ և մեզ ծարաւեացս զբաժակ քո փրկութեան ։ Ո՛ղորմեա ։

Շաբաթ ։

ԳԱՌՆ դու զենեալ միշտ, և կենդանին, անմեղ եկեալ ՝ի պատարագս ։ Ո՛ր ՝ի հաշտութի հօր պատարագեալ բառնաս զմեղս աշխարհի, ՝յանմահից զօրաց փառաւորեալ ։ Յիշեա՛ զհոգիս հաւատով ՝ի քեզ ննջեցելոցն մերոց ։ Ո՛ղորմեա ։

Եւ քարոզեն զխաղաղականն յետ ։ Եւ Մաղթանացն քարոզն բարձր ձայնիւ ։

Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք ։

Եւ Ժողովուրդն ասեն բարձր ձայնիւ ։

Դպիրքն ։ ՏԷՐ մեր և Աստուած մեր երևեցաւ մեզ, Օրհնեալ եկեալ անուամբ տն ։

Քահանայն ։ Կեցո՛ տէր զժողովուրդս ։

Դարձեալ քարոզն զխաղաղականն ։

### Եւ Օրհնութիւն երգեն ։

Լցաւք ՚ի բարութենէց քոց Տէր, ձայնակելով զփառս քո, և օրհնելով ։ Փառք ՚ի բարձունս նորոգողին զմեզ ։

Որ համապատկեր կերպարանես զմեզ, առա_քեա ՚ի մեզ զհոգեւոր քո զօրհնութիւն ։
Փառք ՚ի բարձունս նորոգողին զմեզ ։

### Սարկաւագն ։

Եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք.
Եւ ևս հաւատով ընկա_լեալք ՚յամենայն, որ ՚ի նեղ_նայեն, ՚յանմահ, ՚յանարատ, և ՚յանա_պական խորհրդոյս զՏէ աղաչեսցուք ։

### Օրհնութիւն ։

Պահպանեա զմեզ Տէր, որ կե_րակրեցեր զմեզ, ՚յանմահական սեղանոյ քո ։

### Օրհնութիւն ։

Բաշխելով զմարմին և զարիւն ՚ի փրկու_թիւն աշխարհի, և կենաց անմահից մե_րոց ։

Յետ աւարտման Օրհնութեանն նշանակեն սաղմոս խորհրդականս, մինչև բաշխե_ նոյն կատարեսցեն զհասարակ աղօթիցն ։

Եւ յորժամ հաղորդին աշխարհականքն, Օրհնութիւն երգեն զայս ։

### Աղաղ բաշխման ։

Մայր հաւատոյ մեծ հարս_նարան.
Եւ առագաստ գերադրա_կան.
Տուն փեսային անմահական.
Որ զարդարեաց զքեզ անվախճան ։
Երկրորդ երկինս դու հրաշական.
Փառաց ՚ի փառս բարձրական.
Որ զմեզ ծնանիս լուսոյ նման.
Աւազանաւն սրբարական ։
Բաշխես զհացդ մաքրական.
Զարիւն ըմպել տաս սոսկական.
Ձգես ՚ի վեր գերասահման.
Իմանալեացն անզուգական ։
Եկայք որդիք նոր Սիոնի.
Մատիք առ Տէր մեր սրբութբ.
Ճաշակեցէք այլ և տեսէք.
Զի քաղցր է Տէր մեր զօրութբ ։
Նա բաժանեաց զյորդանան.
Դու զծով մեղաց աշխարհական.
Նմա Յեսու մեծ զօրական.
Զքեզ Տէր յիւր հօր էական ։
Հին օրինակ քեզ և նման.
Դու խորանն ես գերադրական.
Նա խորտակեաց զդրունս անդնդոց.
Դու գտմոխաց զդրունս ՚ի նմանց ։
Հացս այս, մարմին է Քն.
Բաժակս արիւն նորոյ ուխտի.
Ծածկեալ խորհուրդն մեծ յայտնի.
Աստ ՚ի սմա մեզ տեսանի ։
Ա՛ է Քն բանն Այ.
Որ ընդ յաջմէ հօրն բազմի.
Եւ աստ ՚ի մեզ պատարագի.
Բառնայ զմեղս աշխարհի ։
Այն որ օրհնեալ է յաւիտեան.
Հաւր և Հոգւոյն միաբան.
Այժմ և յաւէտ, և յապագայն.
Եւ անսպառ մինչ յաւիտեան ։

## Տաղ ծննդեան, և Յայտնութեան ։

ՈՎ զարմանալի, խորհուրդս այս մեծ յայտնեցաւ.
Վ՟ս՟ որդւոյն ա՟ծ՟ 'ի յերկրաւորս եկեալ ։
Կ ամէր մկրտել 'ի ծառայէն իւրմէ.
Զառնոյր կարապետ զմկրտիչն 'ի յանձն ։
Յ որդանան լեալ փախստական դառնայր.
Զտանկ առ վտանկ պատգամաւոր լինէր ։
Գ եւ մի զարհուրիր, քո արարիչն եմ ես.
Եկեալ մկրտիմ, և լուանամ զմեղս ։
Յ ո՟ յառաջեաց ա՟ծ՟ութեն 'ի ջուրսն.
Հանդերձ Յոհաննու ջ՟ո՟ 'ի գետն էմուտ ։
Ե րկինք պատառեալ, Հայր 'ի վերուստ ճչեալ.
Զայն հօր 'ի բարձանց, որ վկայեաց որդւոյ ։
Դ ա է իմ որդի ընդ որ հաճեցայ.
Դմա լուարուք որդիք մարդկան ձայնէր ։
Ա է Հոգին իջեալ աղաւնակերպ տեսլեամբ.
Յայտնեալ ցուցանէր զփառակից հօր որդի ։
Ա րդ օրհնեալ է հայր, և համագոյ որդին.
Հոգւոյն ճշմարտի, փառք յաւիտեանս.
Ա մէն ։

## Տաղ Յարութեան.

ԳՈՉԵՐ հրեշտակն 'ի վիմէն.
Վ՟ս՟ յարութեան նի.
Կանայք դուք զի զարհուրէք.
Լալով խնդրէք զկենդանին ։
Ր ամից եկն արարիչն.
Վ՟ս՟ զի մարդկան ազատիչն.
Նա 'ի խաչին բարձրացաւ.
Վ՟ս՟ մահուն ա՟ծ՟ մահացաւ ։
Ի տապանի տքնեցաւ.
Վ՟ս՟ թուն քնութեն ըստացաւ.
Վ՟ս՟ ն և մարդ ծանուցաւ.
Մեզ փրկութն յայտնեցաւ ։
Գ ոչեալ զնտոն Պետրոսեան.
Տալ աւետիս յարութեն.
Գալիլեայ է տեհման.
Վ՟ս՟ նդէն եդեալ տե պայման ։
Ո ր յաթոռ հօր բազմեալ.
'Ի հող մահու խոնարհեալ.
Վ՟ս՟ սոր փառօք յարուցեալ.
Մեզ կենաց անձառ պատրաստեալ ։
Ր ամից դասուն սրբասնեալ.
Վ՟ս՟ աքելոցն գովեալ.
'Ի գալիլեայ փութացեալ.
Ձ յո տեսին յարուցեալ ։

## Եւ 'ի վերջ տաղին ասէ Մաղկաւորքն ։

Օ րհնեմ տէր ։
Քահանայն ։ Ո ր օրհնես զայնոս ։
Դպիրքն ։ Եւ զերգն առուն տն օրհնեալ, 'յայսմ հետէ մինչև յաւիտեանս ։

## Երեք անգամ ասէ ։

Քահանայն ։ Կ ատարումն օրհնաց և ։
Դպիրքն ։ Օ րհնեցից զտէր յամ ժամ, յամ ժամ օրհնութն նր 'ի բերան իմ ։
Քահանայն ։ Օ րհնեալ եղերուք ։

Եւ 'ի բաշխելն զնշխարս առ ժողովուրդն երգեն զսաղմոսն 33. Օրհնեցից զտր յամ ։ մինչև 'ի վերջն ։ Եւ 'ի վերջն ասեն . Փ առք հօր և որդւոյ, և Հոգւոյն սրբոյ. Ա յժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, Ա մէն ։

Եւ

Եւ ասեն ։ Ալէլուիա Օրհն ։

Քահանայն ։ Ի սրբոյ աւետարանէս , որ ըստ Յովհաննու ։

Յետ յարութն տռն մերոյ յսի քսի ։

Քահանայն ։ Եւ իբրեւ ճաշեցին ։

Դպիրքն ։ Փառք քեզ տր ած մեր ։

Սարկաւագն ։

Սբ խաչիւս աղաչեսցուք զտր ; զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց . և կեցուսցէ շնորհիւ ողորմութե իւրոյ ։ Ամենակալ տր ած մեր կեցո և ողորմեա ։ Տր ը ողորմեա , Տր ի ողորմեա , Տր ի ողորմեա ։

Քահանայն ։

Պահպանեա զմեզ քս ած մեր , ընդ հովանեաւ սբ և պատուական խաչի քո 'ի խաղաղութե ։ Փրկեա 'յերևելի և 'յաներևոյթ թշնամւոյն . Արժանաւորեա գոհութե փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սբ Հոգւոյդ ։ Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

Եւ արձակին խաղաղութե ։

Վ Ե Ր Ջ.

# CORRECTIONES OFFICII DIVINI ARMENORVM.

## ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԺԱՄԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ:

'Ի յն ժամագրքին, որոյ մակագիրն է այսպէս:

Աղօթամատոյց և ժամագիրք. 'Ի հրամայականութէ տեառն Յակոբայ կաթողիկոսի մերոյ էջմիածնի:

---

Յամստէրտամում:

---

Ի թուին Քի. 1667. և հայոց 1116. փետրվարի ամսոյ քսան:

Սրբագրելիք են այսոքիկ:

Ա. 'Ի յերեսն. 17. 'ի տողն. 17. 'ի մէջ Առաւօտ լուսոյն. ուր ասէ. Բղխումն 'ի հօրէ բղխեալ:
Աւադրեսցի: և յորդւոյ: և ասասցի այսպէս:
Բղխումն 'ի հօրէ և յորդւոյ բղխեալ և այլն ըստ կարգին:

Բ. 'Ի յերեսն 82. 'ի մէջ Ասասցուք ամենեքեան. յետ տողին 22. Ուր ասէ, Վ̃ս ամ̃ հբ̃ և ուղղափառ եպսկ̃ց զ̃տր աղաչեսցուք. Աւադրեսցի:
Վ̃ս սրբազան Պապին մերոյ տեառն: Այս անուն: զտր̃ աղաչեսցուք:
Վ̃ս Պատրիարքին մերոյ տեառն, Այս անուն: կամ. Արքեպիսկոպոսին մերոյ տեառն. Այս անուն: կամ. Եպիսկոպոսին մերոյ տեառն: Այս անուն: զտր̃ աղաչեսցուք:
Վ̃ս վարդապետաց քահանայից. և այլն. ըստ կարգին:
Գ. Այսպէս ասասցի և 'ի Ներսէսեան ժամուն, և Ճաշու ժամուն, և պատարագին: 178. և 205.
Դ. Բայց կաթողիկոսն հայոց կամ եպիսկոպոսն. եթէ իցէ ուղղափառ անուանեսցի 'ի ն իւրում վիճակին և ոչ մի: Իսկ եթէ իցէ հերետիկոս կամ հերձուածող, ոչ ուրեք և ոչ երբեք անուանեսցի:
Ե. 'Ի յերեսն 93. 'ի տողն, 14. և 'ի յերեսն 207. 'ի տողն. 21. հետ Տէրունին մի՛ ասասցի. Որ յարուցեալ զքս մեր: կամ, Որ խաչեցար զքս մեր: կամ որ յարեար 'ի մեռելոց կամ, որ համբարձար փառօք առ հայր կամ, որ եկիր և հանգեար յառաքեալս: կամ, որ եկիր 'ի խորհուրդս մեր քն եկեալ, կամ, որ եկիր եգիպտոս, և այլք այսպիսիք թէ իցեն. այլ ասասցի այսպէս: Սբ̃ Տր̃, սբ̃ և հզօր, սբ̃ և անմահ, ողորմեա մեզ:
Զ. Այսպէս ասասցի և 'ի ն ժամու ճաշու, և 'ի ն պատարագում, և Ներսէսեան:
Է. 'Ի յերեսն. 114. 'ի տողն. 21. 'ի մէջ մաղթանքին, որ սկսանի զ̃ս խաչի քո պատուականի զխաղաղութիւն քո տուր մեզ Տր̃. մի՛ ասասցի: Սրբոյն Յակոբայ հայրապետին, և Մարուգէի ճգնաւորին: այլ ասասցի, այսպէս: Բարեխօսութբ̃ և աղօթիւք սրբոյն, կամ, սրբոյն, այս անուն: Վկայի, կամ. հայրապետի, կամ, կուսի: և այլն. Որոյ. կամ. որոյ, այսօր է յիշատակ: և այլն ըստ կարգին:
Ը. 'Ի յերեսն 166. 'ի տողն 19. 'ի մէջ ժամամուտին Աստուածն անհասանելոյ: մի ասասցի: անհասանելոյ այլ ասասցի այսպէս:

պէս ։ Զծածուկն առն անգիտանալ զբանն ։ և այլն ըստ կարգին ։

Թ. Ի նմին. Խոսքն. 20. մի ասեցի. անիմանալին։ Այլ ասեցի այսպէս։ զԱնն անբովանդակելին ծնաւր ։ Եւ այլն ըստ կարգին ։

Ժ. Ի յետքն. 168. Խոսքն. 19. Մի յետ ածանելոյ Թղթոյն ։ և այլն ։ Եւ ի յետքն. 177. Խոսքն. 9. Յաշարհական նմանակա_տամարտին ։ և այլն.

Այսոքիկ եղեւ ժամանակութեան բոլո_րովիմբ ՙի բացբարձնեցին. և մի ասե_ցին ։ Այլ ՙի տեղեկացին, եթէ պիտոյ լինիցի, ասեցի ժամանակուն ։ Իստո_ծաքի սրբոյ ։ Որ կայ եղեալ ՙի յետքն. 164. Խոսքն 19 ՙի մէջ ժամանակաց ։

Ժա. Ի յետքն 181. Խոսքն 3. ՙի մէջ հա_ւատամքին ։ մի ասեցի ։ ՙի հայրն ամե_նակալ ։ Այլ ասեցի. ՙի հայրն ամենակալ ։ ՙև այլն ըստ կարգին ։

Ի նմին Խոսքն ; 6. մի ասեցի. Ծնեալ ՙյայ հօրէ միածին. այսինքն ՙյէութենէ հօր ։ Այլ ասեցի ։ Ծնեցեալ ՙյայ հօրէ միածին, նախքան զամ յաւիտենից ։ և այլն ըստ կարգին ։

Ի նմին՝ Խոսքն. 10. մի ասեցի. Նոյն էութեն ՙի էութենէ հօր. Այլ ասեցի. Նոյն էութեն ՙհամագոյակից հօր ։ և այլն ըստ կարգին ։

Ի նմին. Խոսքն. 17. մի ասեցի, Հոգւով սրբով Մարեմայ կուսէ զմարմին, չհոգի, և զմիտս ։ Այլ ասեցի ։ Հոգւով սրբով. Մարեմայ կուսէ զմարմին զհոգի, և զմիտ. և այլն ըստ կարգին ։

Ի նմին. Խոսքն. 20. մի ասեցի. չարչարեալ, խաչեալ, Թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ ։ Այլ ասեցի. չարչարեցեալ, խաչեցեալ, Թաղեցեալ, յեր_րորդ աւուր յարեալ ։ և այլն ըստ կարգին ։

Ժբ. Ի յետքն. 182. Խոսքն. 4. ՙի մէջ հա_ւատամքին ։ Այսպէս ասեցի ։ ՙի հօրէ և յոր_դւոյ բղխի ։ Եւ ասեցի այսպէս ։ Հաւա_տամ և ՙի Սուրբ Հոգին, յանեղն և ՙի կատարեալն, Որ ՙի հօրէ և ՙյորդւոյ բղխի, որ խօսեցաւ ։ և այլն ըստ կարգին ։

Ի նմին. Խոսքն. 7. մի ասեցի, զատա_ցեալսն ։ Այլ ասեցի ։ զատուցեալսն ։ և այլն ըստ կարգին ։

Ա յետ և համառօտ թէ ՙի ժամն թէ ՙի պատարագին, հաւատամքն, այսպէս ասեցի.

Ժգ. Ի յետքն. 184. Խոսքն. 14. ՙի մէջ աղօթքին, որ սկսանի. Մեծ սէր և փրկիչ յու քո ։ մի ասեցի. զպատուցեալս հոգւոյդ սրբոյ եղանակի առաքելոյն ։ Այլ ասեցի. զպատ_ուեալս Հոգւոյդ սրբոյ նորանեցեալ առաքե_լոյն. և այլն ըստ կարգին ։

Ժդ. Այլ ոք պարտի գիտել, թէ եր_կու անուանքս այսոքիկ. Հոգի, և Ոգի, զանազանին ՙի միմեանց, զի հոգին նշա_նակէ զայն անմարմին գոյացութիւն ստեղ_ծական, որ ունի բնականապէս զպա_հանջողութիւն միաւորիլ ընդ մարմնոյ, և է գոյացական կերպ նորին, որպիսի է հո_գին բանական, և այլք ։

Իսկ Ոգին նշանակէ զայն գոյացութիւն անմարմին, թէ անստեղծ, և թէ ստեղ_ծական, որ ոչ ունի բնականապէս զպա_հանջողութիւն միաւորիլ ընդ մարմնոյ, ուստի և ոչ կարէ լինել գոյացական կերպ նորին. որպիսի է երրորդ անձն այն Սուրբ այսինքն, ՙի հօրէ և ՙյորդւոյ բղխեցեալն, որ կոչի Ոգի մէ, այլ ոչ հոգի մէ. Որ_պիսիք են և հրեշտակք, և դեւք. որք են անմարմինք գոյացութիւնք ստեղծա_կանք, որք կոչին Ոգիք, այլ ոչ հոգիք. զի ոչ ունին զբնական պահանջողութիւն միաւորիլ ընդ մարմնոյ.

Արդ որոյ ոչ ունիք և ոչ երբէք պարտէք գրել կամ ասել զՍուրբ հոգի, այլ Ոգի. և ուսուցուք յանհոգութենէ ՙգտա_նիցին գոլ գրեցեալք պարտին սրբագրել զի ըստ Սուրբ Ճշմարտութիւն ծանիցի ։ և մանաւանդ յաղագս Ոգւոյն սրբոյ ։ որ ՙի լաթինացւոց կոչի Սանքթուս ըսբիրի_թուս,

Յոյս. և 'ի Յովհաննու կոչի աղբիւր փոխեման. իսկ հոգին լաւթինքն ասի աղունիմ. և յովհաննէն ասի փոխել. Ուստի և հայերէն Աստուածութեան ընթերցուածն, կամ աղբիւր փոխեմայն, ասի նը Որդի: Եւ աղունիմայն, կամ փոխելն, ասի Հոգի. ըստ որում բարեպէս ասի մաքուր և առաջ հոգին սրբոյն, Գրիգորի լուսաւորչին.

Ծե. 'Եսայեայ 174. 'հատուած. 23. 'իմէջ ծամամուտին. Արք որ հնձանեցուցեր. մի ասիցէ: Հաւատամ: Այլ ասիցէ այսպէս: 'Իմէջ միոյ հաւատոյ. և կայուցեալ. և այլն ըստ կարգին:

Ծգ. 'Եսայեա 109. 'հատուած. 19. 'իմէջ, Ճառագայթեալ բանն 'ի Հօրէն. 'ի տուննե Շնօրհ էիցս հասմանին. մի ասիցէ: Բանն: Այլ ասիցէ այսպէս: 'իմէջ միոյ բանի. ընդ եղեալ: և այլն ըստ կարգին:

Ծէ. Եւ որք 'ասիցեն ասել. զԽոստովանիմք և հաւատամք... ամենակատար սրտիւ. և այլն. ասիցեն այսպէս.

Խոստովանիմք և հաւատամք ամենակատար սրտիւ զՀայրն Աստուած անեղ անծին և անսկիզբն: Այլ և ծնօղ Որդւոյ և բղխօղ Հոգւոյն սրբոյ:

Հաւատամք զԲանն Աստուած անեղ, ծնեալ և սկսեալ 'ի Հօրէ, նախքան զամենայն յաւիտեանս, ոչ յետոյ և ոչ կրտսեր. այլ որքան Հայրն Հայր, ընդ նմին և Որդին Որդի.

Հաւատամք զՀոգին Սուրբ անեղ և անժամանակ, ոչ ծնեալ, այլ բղխեալ 'ի Հօրէ և յՈրդւոյ. Էակից և փառակից Հօր և Որդւոյ.

Հաւատամք զԵրրորդութիւնն սուրբ, մի բնութիւն և մի Աստուածութիւն. ոչ երեք Աստուածք, այլ մի Աստուած, մի կամք, մի թագաւորութիւն և մի իշխանութիւն, արարիչ երևելեաց և աներևութից.

Հաւատամք յեկեղեցի սուրբ, 'ի թողութիւն մեղաց, և 'ի հաղորդութիւն սրբոց.

Հաւատամք զմին յերից անձանց զԲանն Աստուած ծնեալ 'ի Հօրէ նախ քան զամենայն յաւիտեանս; 'Ի ժամանակի իջեալ 'յԱստուածածին կոյսն Մարիամ, առեալ 'յարենէ նորա միաւորեաց ընդ իւրում Աստուածութեան.

Ինն ամիս համբերեալ 'յարգանդ անարատ կուսին, և եղև Աստուած կատարեալ, մարդ կատարեալ, հոգւով մտօք և մարմնով 'ի մի անձն և 'ի մի դէմ միաւորեցեալ 'յերկուս բնութիւնս:

Աստուած մարդացեալ առանց փոփոխման, առանց այլայլութեան, անսերմն յղութեան, և անապական ծննդեան. Որպէս ոչ է սկիզբն Աստուածութեան նորա, և ոչ վախճան մարդկութեան նորա. Զի Յիսուս Քրիստոս երէկ և այսօր, նոյն և յաւիտեան.

Հայր վկայեալ զա է Որդի իմ սիրելի. Եւ Հոգին Սուրբ աղաւնակերպ իջեալ. Փորձեցաւ 'ի սատանայէ և յաղթեաց նմա. Քարոզեաց մարդկան զփրկութիւն, աշխատեցաւ մարմնով, վաստակեցաւ քաղցեաւ, և ծարաւեաւ.

Յետոյ եկեալ կամաւ 'ի չարչարանս. Խաչեցաւ և մեռաւ մարմնով, և կենդանի Աստուածութեամբ; Մարմինն դրեցաւ 'ի գերեզմանի միաւորեցեալ Աստուածութեամբ. և հոգին իջեալ 'ի դժոխս անբաժանելի Աստուածութեամբ. Քարոզեաց հոգւոյն, աւերեաց զդժոխս, և ազատեաց զհոգիսն. Յետ երից աւուրց յարեաւ 'ի մեռելոց, և երևեցաւ աշակերտացն.

Հաւատամք զի Տէրն մեր Յիսուս Քրիստոս նոյն մարմնովն համբարձեալ յերկինս, և նստեալ ընդ աջմէ Հօր.

Այլ և գալոց է նովին մարմնովն, և փառօք Հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս. Որ և յարութիւն ամ մարդկան

Հաւատամք և զհատուցումն գործոց արդարոցն կեանք յաւիտենականս, և մեղաւորացն տանջանք յաւիտենականս.

Ետու խոստովանութեն այս հաստատուն ։

և հրամայողական ; որ սկսանի այսպէս.

Մեղայ ամենասուրբ երրորդութեան հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. և այլն.

Բարձցի ամենևին 'ի միջոյ, և ոչ երբէք և ոչ ուրեք ասիցի, ոչ հրապարակաւ, և ոչ առանձնակի: Բայց եթէ ոք կամիցի ընթեռնուլ զնոյն մեղայն, առ 'ի բարեպէս քննել զխղճմտանս իւրս, զի կարիցէ 'ի միտ ածել, թէ զորս 'ի մեղացն 'յայնցանէ գործեալ իցէ, բարւոք առնէ; այլ զի գնացեալ առ քահանայն խոստովանիցի առանձնապէս:

Ծը. Իսկ քահանայն մինչ տայցէ զարձակումն ասելով Ողորմեսցի քեզ. և այլն. զգուշասցի մի երբեք ասել, Արձակեալ եմ. զի բայս այս է անցեալ ժամանակ, և նշանակէ աշխարհօրէն. Արձակեցած եմ կամ Արձակեցի. այլ ասիցէ Արձակեմ. որ է ներկայ ժամանակ. և նշանակէ աշխարհօրէն. Այժմ կարձակեմ. Ուրեմն այսպէս ասիցէ:

Ողորմեսցի քեզ հզօրն և մարդասէրն Աստուած; և թողութիւն շնորհեսցէ, ամ յանցանաց քոց, խոստովանեցելոց, և մոռացելոց:

Ես եւ 'ի կարգէս քահանայութեան և իշխանութեամբ ամենայն հրամանացն. Թէ զոր արձակեցէք 'ի յերկրի, եղիցի արձակեցեալ 'ի յերկինս, Նովին բանիւ: Ես արձակեմ ✠ զքեզ յամ մասնակցութե մեղաց քոց, 'ի խորհրդոց 'ի բանից, և 'ի գործոց. Յանուն ✠ հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Ամէն: Եւ դարձեալ տամ զքեզ 'ի խորհուրդ սբ եկեղեցւոյ, զոր ինչ գործեսցես, եղիցի քեզ 'ի բարի գործութիւն, և 'ի փառս հանդերձեալ կենացն. Ամէն:

ԾԹ. Այլ և ամ ոք, որ կամի գալ և լինիլ, և կեալ ուղղափառապէս, պարտի նախ դաւանել զուղղափառ հաւատն, և հրաժարել 'յամենից հերետիկոսութեանց, և հերձուածողութեանց, և արձակել 'ի կապանաց բանադրանացն. Եւ ապա պահել [illegible] սրբոցն րութիւն, Եւ վարել տօմարաւ եւ տօնաւուրս ըստ հրամանի սրբոյ եկեղեցւոյն քո. և ըստ ամի 'ի բանս հաւատոյ և եկեղեցական [illegible] կալ 'ի հնազանդութեան սրբոյ կաթուղիկէի եկեղեցւոյ. և գերագունեղի քահանայապետ նորին սրբազան Փափին, որ է փոխանորդ Քի 'ի վր երկրի; և յաջորդ սրբոյն Պետրոսի Առաքելոյն: և է հայր, և իշխան, և գլուխ, և վարդապետ ընդհանուր եկեղեցւոյն Քի:

Կ. Այլ և պարտի ամ ոք պահել զնոյն սրբազնութիւն ամ ուրեք և ամ երբէք 'ի նմա գրեանս, 'ի բանս և 'ի գործս, միծաւ զգուշութեամբ 'ի կենցութեն հոգեւոր հերձանց, և այլոց.

Վ Ե Ր Ջ.

# CORRECTIONES HYMNORVM ARMENORVM.

## ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՇԱՐԱԿԱՆԱՑ։

Ի գրքոյն, որոյ մականգիրն է այսպէս։

## ՇԱՐԱԿՆՈՑ.

Երաժշտական երգեցմունք հոգեւորականք, ծննդոց եւ երջանկաց սրբոց վարդապետաց հայոց թարգմանչաց, զկարգաւորութիւն եկեղեցւոյ վայելչացուցանողաց։

Ի թուոյն. ջի՞ ռնկք. եւ ՚ի նորայոց 1113 յօգնատառ ամսոյն. Տր. ՚ի սուրբ աթոռոյն ՌԶ էջմիածնի, եւ [illegible] յամսոյն լուսաւոր. յեկեղեցական ատեան վերակատարման տնօրէն տերաւանդ կնքեալ։

Արքայագրելիք են այսպիսիք։

ա. Ի յէջն 21. ՚ի տողն. 18. Խաչանշանեալ փրկչական հայրդն. մի՛ ասիցի. Որ անիմանալի։ Այլ ասիցի. Որ անբովանդակելի։ Այլպէս եւս ասիցի. ՚ի յէջն 28. ՚ի տողն. 5. Ուղղափառացն սրբութեանն հայրդն. ՚ի յէջն. 136. ՚ի տողն. 3. Բանն որ ընդ հօրն. ... հայրդն. Որ համագոյակից ես հօր անքննելի առաջին գործառութեանն։ ՚ի յէջն. 381. ՚ի տողն 2. Նկարագին յարութեան. Հայրդն, Տէր, փառաւորեալ է անուն քո, երկրորդ եւ չորրորդ գործառութեանն։ ՚ի յէջն. 719. ՚ի տողն. 22.

Եւ յայլ տեղիս, եթէ սոյն նմանիք գտանիցին։

բ. Ի յէջն. 376. ՚ի տողն. 6. [illegible] սուրբն. մի՛ ասիցի։ Ղամանեան։ Այլ ասիցի։ Ղամանեան։

Ի յէջն. 421. ՚ի տողն. 6. Աշխարհականս արդարութեանն, ողորմեալի միջի սուրբն. մի՛ ասիցի. Եւ անուոց ՚ի նորոգեցին։ Այլ ասիցի. Եւ անպարտ ՚ի նորոգեցին։

Ի յէջն. 462. ՚ի տողն. 6. Ծառայութ փառացն երկրորդ սուրբն. մի ասիցի։ Որ անուոց սորեցին։ Այլ ասիցի։ Որ անմահ սորեցին։

Ի յէջն. 463. ՚ի տողն. 6. Հայրդն նորին երրորդ սուրբն. մի ասիցի. Այսօր անուոց ըն յծնունդ. Այլ ասիցի։ Այսօր անհաս ըն յէութեան։

Ի նմին. ՚ի տողն. 20. Ողորմեալի նորին առաջին սուրբն. մի ասիցի. Զանուոց նորոգեցին։ Այլ ասիցի։ Զանհաս ընդ նորոգեցին։

Այլպէս ասիցին եւ յայլ տեղիս, եթէ սոյն նմանիք գտանիցին։

գ. Ի յէջն. 27. ՚ի տողն. 1. Մակագրին Ուղղափառացն սրբութեան. մի ասիցի. [illegible]։ Այլ ասիցի։ [illegible]։

դ. Ի յէջն. 86. 87. 88. Որ զերկնաւոր Թագաւորութիւն քո, եւր սարօքն։ Շարականք ամենայն, որք զան, երգիցեն յաւուրս տօնից Թագաւորաց, յեկեղեցւոյ առաջնորդելոց, եւ ընդունեցելոց. փոխելով միայն ղանունսն։

Եայց

Բ այց ՚ի յերգն 87. ՚ի տողն. 21. Հարցին նորին գործառական երկրորդ տունն. մի ասիցի: հիմնեցուցոյ ոք զընկեցեալսն: այլ ասիցի, զարդարեալ ոք զընկեցեալն:

՚Ի յերգն. 88. ՚ի տողն. 4. Օրհնութեան նորին երկրորդ տունն. մի ասիցի: հիմնեցուցոյ զընկեցեալ ոք: այլ ասիցի: զարդարեալ զընկեցեալն ոք:

՚Ի նմին. ՚ի տողն. 12. Այլ երկնեցի նորին երկրորդ տունն. մի ասիցի: և հիմնադիր ոք հաւատոյ: այլ ասիցի: և զօրացոյց ոք հաւատոյ:

Ե. ՚Ի յերգն. 532. 533. 534. 535. 536. մինչև ՚ի տողն 15. Յաղթող և ոք հայրապետին, իւր արօքն:

Այլ ասիցեն շարականքն և ժամն, Յակոբայ հայրապետին, եթէ հաւատացեալ նա էր Յակոբ եպիսկոպոսն Նիսիբայ, զորմէ լինի յիշատակ ՚ի [illegible] հնգետասաներորդում աւուր Յունիսի: այլ պա Թէ ոչ, արգելցին:

Ն մանաւանդ և ս, այլ ասիցեն շարականքն, և ժամն, որք գոն: ՚ի յերգն. 572. ՚ի տողն 1. Վարդանանցն և Ղևոնդեանցն, իւրեանց արօքն. մինչև ՚ի վերջն երգին. 583. եթէ հաւատացեալ եղեալք էին նոքա Քրիստոնէից մարտիրոսք էին: այլ պա Թէ ոչ, արգելցին: Ըստ այսմ և ս եղիցին բնաւք շարականք, և ժամք, յաղագս որոց գոն կարծիք և երկբայութիւնք, որպ ՚ի վերոյ:

Զ. ՚Ի յերգն. 91. ՚ի տողն. 12. Յաղթող գտաւեր վերջին տունն. մի ասիցի: Նմ եղև գլուխ [illegible] արքայ: այլ ասիցի: Նմ եղև [illegible] արքայ:

Է. ՚Ի յերգն. 101. ՚ի տողն. 5. Ցնծայ այսօր եկեղեցի այ. մի ասիցի: ՚ի վեր վիմի հաւատոյ: այլ ասիցի: ՚ի վեր վիմին հաւատով:

Այսպէս և ս ասիցեն: ՚ի յերգն. 452. ՚Ի տողն. 19. Ցնծա ընդ քաղաքս այ էն: ՚ի վեր վիմին հաւատով հիման. և այլն ըստ կարգին. ՚ի յերգն. 489. ՚ի տողն. 2. ՚ի վերայ վիմին հաւատով. և այլն ըստ կարգին, Նաւակատեաց ոք խաչին. ՚Ի յերգն. 545. ՚ի տողն. 3. ՚ի վեր վիմին հաւատով հիման ոք եկեղեցւոյ, և այլն ըստ կարգին: Այսօր արքայ հայրապետացն ժողովեալքն. Երկրորդ շարականն. ժողովեալ ոք հայրապետացն:

Եւ այլուրեք եթէ սոյնպիսի նմանիք հանդիպեսցին:

Ը. ՚Ի յերգն. 218. ՚ի տողն. 22. Այսօր զուարճացեալն վերջին տունն. քնար քաղցրախօս: մի ասիցի: [illegible] այլ ասիցի այսպէս: [illegible] և այլն ըստ կարգին:

Թ. ՚Ի յերգն. 251. ՚ի տողն, 13. Թագաւոր գոլով քո աշխարհին, չորրորդ շարականն: մի ասիցի. [illegible]: այլ ասիցի: [illegible]: և այլն ըստ կարգին:

Ժ. ՚Ի յերգն. 268. ՚ի տողն. 18. Վերանորոգ երկնեցին. Ամենակալն, ձի, մի ասիցի: Այսօր [illegible]: այլ ասիցի այսպէս: Այսօր կարգեցաւ օրինակ խաչահաւատութեան [illegible] և այլն ըստ կարգին.

ԺԱ. ՚Ի յերգն. 277. ՚ի տողն. 11. [illegible] այսօր անճառն. ընդ քաղաքն [illegible] անխափ. մի ասիցի: [illegible]

զերկնաւոր ; զխաւարծինն անանձնաւո_
րաց , զմատաղական ևզինգևոր : Այլ
ասելի այսպէս ; Եւ զմարմին իւր կեն_
դանար , զխաւարծինն անանձնաւոր ,
զմատաղական և զկենդանածն , ժող. ուխտ_
ին աղեան աւետքն : և այլն ըստ կար_
գին :

ԺԲ. Ի յէջն. 284. 'ի տողն. 22. Այսօր ան_
ձառն վերջի տանն . քարոզն 'ի նախանձե_
լեայ : մի ասելի : զորդն ընդ հօր փառա_
ւորն : Այլ ասելի այսպէս . զորդն ընդ
հօր և սրբոյ հոգւոյն և փառաւորն :

ԺԳ. Ի յէջն. 288. 'ի տողն. 9. Աղբերայն
մատաղականն մէջն ; մի ասելի . Թէ ոչ
քսորհօք , այլ արտաօք . Այլ ասելի .
քսորհօք հաւան և արտաօք :

ԺԴ. 'ի յէջն . 307. 'ի տողն . 12. Լոյսա_
տր 'ի հրեշտն ամրան , տէր հարցն , որոցո_
մնայն մէջի տանն . 'ի յարուԹԷ կարգն .
Ախսկիզբն քանդ ; մի ասելի . Այսօր
զմահն , և զմատաղական մարմինն տն :
Այլ ասելի , Այսօր զամէնասուրբ և
զմատաղական մարմինն տն ; և այլն ըստ
կարգին :

ԺԵ. 'ի յէջն . 313. 'ի տողն . 4. Նոր_
ոգեալ կոչիքն , Անծագուագէն վերջի
տանն , մի ասելի . Զնոր խաւանարանդ
հրաշալի նորխաւանման քանին և մարմ_
նոյն : Այլ ասելի : Զնոր միարանդ
հրաշալի նորոյ միաւորման քանին և մարմ_
նոյն : և այլն ըստ կարգին :

ԺԶ. Ի յէջն . 314. 'ի տողն. 17. որ եկեր
'ի փրկուԹի , տէր . հարցն առաջի գոր_
ծատանն , 'ի յարուԹԷ կարգն . ուր ասէ :
Որ անմահին մարմնով : Նեղաղոգելի
կեն 'ի մէջ . անմահքինքն և մարմնովքն :
Եւ ասելի այսպէս : Որ անմահքն ; մար_
մնով : Եւ այլն ըստ կարգին :
Այսպէս և 'ի յէջն . 650 . 'ի տողն . 22 .
'ի հանգստեան կարգն , տէ. որ անձառ
անորէնուԹեան երկրորդ տանն . Ուր
ասէ ; Որ անչարչարելի մարմնով եկիր :
Ներողութեան կեն 'ի մէջ . անչարչարելի_
ոգին և մարմնովքն : Եւ ասելի այսպէս :
Որ անչարչարելի ; մարմնով եկիր կը_
մաւ : Եւ այլն ըստ կարգին :

ԺԷ. Ի յէջն . 351 . 'ի տողն 10 . 'ի յարու_
ԹԷ կարգն վառ. ձայնի առաջի հարցն .
մի ասելի ; Անճառելի բնուԹի և բան
հօր : Այլ ասելի : Անճառելի բնու_
Թեամբ , և բան հօր : և այլն ըստ կար_
գին :

ԺԸ. Ի յէջն . 351 . 'ի տողն . 24 . Նոյնոյ
հարցն վերջի գործատանն . մի ա_
սելի : Զմատաղական լոյսն 'ի հօրէ ծա_
գեալ որ զհոգին : Այլ ասելի այսպէս :
Զմատաղական լոյսն 'ի հօրէ և 'յորդւոյ
ծագեալ որ զհոգին : և այլն ըստ կարգին :
'Ի յէջն . 389 . 'ի տողն . 11 . Առաջերոյ
ազատնոյն երկրորդ տանն . և երրորդ
տանն . մի ասելի : զոր առեալ 'ի հօրէ
պատմէ : այլ ասելի ; զոր առեալ 'ի հօ_
րէ և 'յորդւոյ պատմէ : և այլն ըստ
կարգին :
'Ի նմին . 'ի տողն . 14 . մի ասելի : ելողն
'ի հօրէ հոգւոյն սրբոյ : Այլ ասելի ;
Ելողն 'ի հօրէ և 'յորդւոյ հոգւոյն սրբոյ
և այլն ըստ կարգին :
'Ի յէջն . 410 . 'ի տողն . 19 . 'ի հարաշարժ
աղբերէն սրբոյ մեծ էջի տանն . մի
ասելի : Որ առաջեցար 'ի հօրէ կենդա_
նարար վտակ : Այլ ասելի . Որ առա_
ջեցար 'ի հօրէ և 'յորդւոյ կենդանարար
վտակ : և այլն ըստ կարգին :
'Ի յէջն . 422 . 'ի տողն . 6 . տէ. Աշխարհական
արգասուԹեանն . դձ. հարցն որ երկնիցն
վերջի տանն . մի ասելի : Բղխեցելոյն
'ի

՚ի հօրէ երգեմք զփառս ՚ի բարձունս : Այլ ասիցի : Բղխեցելոյն ՚ի հօրէ և ՚յորդւոյ երգեմք զփառս ՚ի բարձունս :

՚Ի յէջս : 547. ՚ի տողն. 14. Այսօր սրբոց հայրապետացն, որք երգեցին երրորդութեանն. մի ասիցի : Բղխեցելոյն ՚ի հօրէ հոգւոյն սրբոյ : Այլ ասիցի : Բղխեցելոյն ՚ի հօրէ և ՚յորդւոյ հոգւոյն սրբոյ : և այլն ըստ կարգին :

՚Ի յէջս : 597. ՚ի տողն. 20. Լոյս արար, ից լուսոյ, առաջնոյն լոյսի. երրորդութեանն. մի ասիցի. Լոյս ՚ի հօրէ բղխումն աղբիւր բարութեան : Այլ ասիցի. Լոյս ՚ի հօրէ և ՚յորդւոյ բղխումն աղբիւր բարութեան : և այլն ըստ կարգին :

՚Ի յէջս. 654. ՚ի տողն. 16. Համբարձման. քձ. որ Թգ̄րդեա Թգ̄րգի առաջի գործատուէն. մի ասիցի : Զառաքեալսն ՚ի հօրէ զմխիթարիչ : Այլ ասիցի : Զառաքեալսն ՚ի հօրէ և ՚յորդւոյ զմխիթարիչ : Եւ այլն ըստ կարգին :

Այլ և ՚ի յէջս. 403. ՚ի տողն. 10. Հոգեգալստեան հինգերորդի աւուր օրհնութիւն : մի ասիցի : Զանմեկնելաբար բղխումն ՚ի հօրէ զհոգին ճշմարիտ : Այլ ասիցի : Զանմեկնելաբար բղխումն ՚ի հօրէ և ՚յորդւոյ զՀոգին ճշմարիտ : Եւ այլն ըստ կարգին :

՚Ի յէջս : 405. ՚ի տողն. 6. Նորին քէ. հարցին վերջի գործատուէն. մի ասիցի : Զելոյն ՚ի հօրէ զառատապարգև աղբիւրն խնամոց : Այլ ասիցի : Զելոյն ՚ի հօրէ և ՚յորդւոյ զառատապարգև աղբիւրն խնամոց : և այլն ըստ կարգին :

՚Ի յէջս. 407. ՚ի տողն. 5. Հոգեգալստեան վեցերորդի աւուր ա̄կ հարցն. մի ասիցի : Անճառելի բղխումն ՚ի հօրէ հոգիդ ճշմարիտ : Այլ ասիցի : Անճառելի բղխումն ՚ի հօրէ և ՚յորդւոյ հոգիդ ճշմարիտ : Եւ այլն ըստ կարգին :

Եւ այլուրէք եթէ սոցին նմանիք գտանիցին, նմանապէս ասիցին :

ԺԹ. ՚Ի յէջս. 369. ՚ի տողն. 1. Համբարձման երկրորդ հարցն. ֆձ. մի ասիցի : Ծագումն միածնի որդւոյ քո ՚ի խերկինս անմեկնելի անեղ մարմնացեալ ՚ի սրբոյ կուսէն : Այլ ասիցի : Ծագեցեալն ՚ի քէն միածին որդին քո, ով հայր անմեկնելի անեղ մարմնացեալ ՚ի սրբոյ կուսէն : Եւ այլն ըստ կարգին :

Ի. ՚Ի յէջս. 391. ՚ի տողն. 9. Աղաւաբերոյ աղաւնոյ հարցն, ամ̄. առաջի գործատուէն. մի ասիցի : Զելոյն ՚ի հօրէ զէակից որդւոյ սուրբ զհոգին : Այլ ասիցի : Զելոյն ՚ի հօրէ և ՚յորդւոյ. զէակիցն նոցունց սուրբ զՀոգին : Իսկ այլն ըստ կարգին :

ԻԱ. ՚Ի յէջս. 392. ՚ի տողն. 22. Նորոգին ճաշոյն. քձ. մի ասիցի : Որ ՚ի հայրաշաւիղ ՚ի յաղբերէն յառաջբղխեալ անհատաբար ՚ի յորդւոյ տիրապէս սուրբ հոգին : Այլ ասիցի : Որ ՚ի յարաշաւիղ ՚ի յաղբերէն յառաջբղխեցեալ անհատաբար ՚ի հօրէ և յորդւոյ տիրապէս սուրբ հոգին : Իսկ այլն ըստ կարգին :

Այլ յայսմանէս ՚ի յէջս, 409. ՚ի տողն 3. Հոգեգալստեան եօթներորդի աւուր օրհնութիւն. մի ասիցի. ՚Ի հայրաշաւիղ յաղբերէն անհատահոսող վտակ : Այլ ասիցի. ՚Ի յարաշաւիղ յաղբերէն անհատահոսող վտակ : Իսկ այլն ըստ կարգին :

ԻԲ. ՚Ի յէջս. 395. Նորին և նման հօր և որդւոյն. ա̄կ. հարցն. մի ասիցի. Որ անխառնելի ես լեութեն և անպատում հօրէդ ճշմարիտ անմեկնելաբար բղխումն ՚ի հօրէ, և համագոյակից որդւոյն միածնի : Այլ ասիցի : Որ անբաժանդակիցն

Ես

հայլեւթէ, և անպարտում բողոք Աչմա_
ցին ; անանկզբնաբար բղխումն ՚ի Հօրէ և
յորդւոյ , և համագոյակից Նոցունց
պաշտելի ։ Նոյն այլն ըստ կարգին ։

Ծգ. Ի յեջս. 398. ՚Նուագն. 5. բոգեգալու
տեան Եփրեմեան աւանդն. ՚ՔՆ Հարցմն. մի ասէ
ցէ. Որ բոլորից ես պատճառ էից անպատ_
ճառից , և որոց պատճառաւ. հայր ան_
ծին և անսկիզբն , որդւոյ պատճառ ան_
ժամանակ ծննդեամբ , և հոգւոյ բղխ_
մանն անքննաբար ։ Հոգւյ ասեցէ այսպէս ։
Որ բոլորից ես պատճառ արարածոց ,
հայր անծին , և անսկիզբն , որդւոյ ծնող
յաւիտենից , և Որդւոյն սրբոյ բղխող
ընդ որդւոյ համագոյաբար ։ Նոյն այլն ըստ
կարգին ։

Ծդ. Ի յեջս. 401. ՚Նուագն. 16. Զօր
բոլորն աւանդն. ՚ՔՆ. Հարցն Եփրեմայ տաղն.
մի ասէցէ ։ [illegible]
դեամբ ։ Հոգւյ ասեցէ Որ ես անսկզբնաբար
ւոյ ծննդեամբ ։ Նոյն այլն ըստ կար_
գին ։

Ծե. Ի յեջս. 689. Նուագն. 9. ամե
անեղ անժամանակն ։ մի ասէցէ ։ որդւոյ
պատճառ ծննդեամբ անճառ , հոգ_
ւոյն բղխմամբ անքննաբար ։ Հոգւյ ասե_
ցէ այսպէս ։ որդւոյ անքնն ծննդեամբ
անճառ , և ընդ որդւոյն հոգւոյն սրբոյ
բղխմամբ համագոյաբար ։ Նոյն այլն ըստ
կարգին ։

Ծզ. Ի յեջս. 407. ՚Նուագ. 21. բոգե_
գալստեան վեցերորդն աւր. ՚ՔՆ.
ողորմեայն. մի ասէցէ ։ Որ հայրական
խնկութենէն յառաջբղխեալ ես ։ Հոգւյ ասեցէ այսպէս ։ Որ ՚ի Հօրէ
և ՚յորդւոյ յառաջբղխեցեալ ես ։ Նոյն այլն ըստ կարգին ։

Ծէ. Ի յեջս. 410. ՚Նուագն. 10. Եօթ_
ներորդն աւուր . ՚ՔՆ . հարցն առաջին
քարոզութեանն ։ մի ասէ Որ զնմանն
Հօր Ծնեալն Ի Հօրէ ,
ասէցէ ։
Որ փոխանակ միածնին ՚ի Հօրէ և յորդւոյ ,
Նոյն այլն ըստ կարգին ։

Ծը. Ի յեջս 549. ՚Նուագն. 9. բոլ հրաշալի
նախահարցն. չորրորդ տաղն . մի ասէցէ
որ հօրէն ելող ՚ի հօրէ , ՚ի որդւոյ .
Հոգւյ ասէցէ . Որ բղխին ելող ՚ի հօրէ և
յորդւոյ , Յորդւոց Նոցունց

Ծթ. Ի նմին . ՚Նուագն. 13. Նորին հեր_
գերորդ տաղն. մի ասէցէ ։ միաւորեալ ընդ
Որ ՚ի հօրէ ։ Հոգւյ ասէցէ ։ [illegible]
[illegible]
[illegible] Նոյն այլն ըստ
կարգին ։

Կ. Ա մնայն որ , որ կամիցի զփրկութիւն
և կեցութիւն հոգւոյ իւրոյ պարտաւորի
պահել զկենդանարար նուիրագործութիւն
մինչ զսոյն հուն Ժամանակագրութիւն ։
Ի սկ որք ձեռագրիւ շարականաց երգեն
զնոյն , պարտին և զարտաքոյ զարմանալ
և պահել զկենդանարարն սրբագործու_
թիւնս , զի ՚ի ձեռագիրս շարականացն
և նմանս տպագիրս գտանին , երբ այ_
նորքին տաղքն զերկինքն , Որ հրաշալին ։
Որք սկսանին այսպէս , Մ նա նա՚յայնմ
աւուրս. և այլն ։ Ա սուրբ անտանելի
սուրբ հաւատ. և այլն ։ Գ երգեն շա_
րակն ՚յարմարոց ։ և այլն ։ զոր պարտին
սա որ հեռքեր և մերժել , զի մի զասմուն
և բարիութիւն այ արդարադատութեան ա_
ռաւել լինիցի ։

Կա. Գ իտելի է և , որ սրբազան Ժողովն
պրտում յատուկ է հոգւոյ զհամաձայնութիւն
հաւատոյ , և ՚ի բացբերանաւ զորոնք ՚ի
մէջոյ ցուցանոյ , կամեցաւ միայն սրբա_
գրել

E

գրել զայսոսիկ , որք յայտնապէս կամ ծածկաբար հնչեն ընդդէմ ճշմարտութեան հաւատ[illegible] հետեւեալքս են ընդդէմ կեն[illegible]ոցքեաց :

Իսկ զկնալանս, որք են ընդդէմ առնեստոր քերականութեան կամ հայկաբանութեան, ոչ հաճեցաւ ինձն սրբագրել , զի մի ծանր թուեցի լսողաց . այլ թող ձեռնատառաներաց վարդապետաց եւ այլոց գիտնոց ուսումնասիրաց , ամիցի նոքա , որք են քաջալեալքս տեղեակք հայկաբանութեան ըստ տեղւոյն եւ ըստ ժամանակին խոհեմալքս , եւ ճշմարտաբար հոգայցեն սրբագրել զնոյնս , զի նամենայնում , եւ ըստ ամի ; ճշմարտութեան քեզ գովեցեւ ՚ի փառս մեծագունս ամ :

## Վ Ե Ր Ջ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ